ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VII

ԴԱՍԱՐԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Ս 000

Սարգսյան Ա.
Ս 000 Համաշխարհային պատմություն։ 7–րդ դասարան։ Մեթոդական ուղեցույց / Ա. Սարգսյան .— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 108 էջ։

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978–9939–99–000–0

© Սարգսյան Ա., 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ., 2023

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

1. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ) ԴՊՐՈՑՈՒՄ

«Համաշխարհային պատմություն» առարկայի ուսուցման նպատակներն են՝ ընդլայնել սովորողների աշխարհայացքը, ամբողջացնել արժեքային համակարգը, ձևավորել ազգային ու համամարդկային արժեքներ կրող, սոցիալապես ակտիվ, պատասխանատու և պահանջատեր քաղաքացի, նախապատրաստել նրանց հետագա կրթության, մասնագիտական կողմնորոշման կամ աշխատանքային գործունեության՝ ելնելով հարափոփոխ աշխարհում համամարդկային արժեքներով, հայրենասիրության ու քաղաքացիական ոգով դաստիարակելու անհրաժեշտությունից:

Հիմնական (միջին) դպրոցում սովորողը պետք է կարողանա՝

- Մեկնաբանել մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և գաղափարական փոփոխությունները, վերլուծել դրանց իրականացման գործում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը:
- Քննարկել համաշխարհային գործընթացները և դրանց ազդեցությունները առանձին տարածաշրջանների վրա և ընդհակառակը:
- Հետազոտել անհատ-հասարակություն միջավայր փոխազդեցությունն ու փոխկապվածությունը:
- Զարգացնել ակտիվ, բանիմաց և պատասխանատու քաղաքացու կերտմանը միտված գիտելիքներ և հմտություններ:
- Զարգացնել քննական վերլուծական միտքը պատմական տարբեր աղբյուրների վերլուծության ու մեկնաբանման հիման վրա՝ ձևավորելով պատմական մտածողություն:

Ա.2 ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պատմությունը անհատի, ազգի և ողջ մարդկության հիշողությունն է: Ինչպես յուրաքանչյուր անհատի պատմություն պայմանավորված է նրա անհատականությամբ, այնպես էլ համայն մարդկության պատմությունը ժամանակակից ձեռքբերումների մարմնավորումն է:

Համաշխարհային պատմության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս տեսնելու մարդկության զարգացման ուղին՝ քաղաքակրթությունների ձևավորումից մինչև գլոբալ փոխազդեցություններ, նախապատմական ժամանակաշրջանից մինչև հետարդյունաբերական շրջանի գիտատեխնիկական նվաճումներ: Հնարավորություն է տալիս հասկանալու և արժևորելու մշտապես փոփոխվող աշխարհի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացները և դրանցում դերակատարում ունեցած անհատներին:

Այս ամենի արդյունքում անձը մարդուց վերածվում է անհատի և գիտակցում է իր տեղը սերունդների հերթափոխում՝ խորապես ըմբռնելով իր՝ որպես պատասխանատու քաղաքացու գոյության իմաստը: Սույնով պայմանավորված՝ «Համաշխարհային պատմություն» առարկան հանրակրթության անքակտելի մասն է և անցյալի ու ներկայի պատմական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները կապող կարևորագույն դերակատարում ունի:

3. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

7.1.1. Ներկայացնի հնագույն քաղաքակրթությունները, դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, առանձնահատկությունները համեմատի միմյանց հետ:

7.1.2. Վերլուծի և համակարգի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական համատեքստում:

7.1.3. Ուսումնասիրի հին քաղաքակրթությունների կողմից ժամանակի մարտահրավերները հաղթահարելու գործընթացները՝ դիտարկելով այն որպես հասարկության զարգացման կարևոր բաղադրիչ:

7.1.4. Գնահատի հնագույն քաղաքակրթությունների ազդեցությունը արդի հասարակությունների վրա:
7.2.1. Վերլուծի անտիկ քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման գործընթացները, առանձնահատկությունները համեմատի միմյանց հետ:
7.2.2. Վերլուծի այն գործընթացները և գաղափարները, որոնք հանգեցրին անտիկ
քաղաքակրթությունների կործանմանը:
7.2.3. Ուսումնասիրի անտիկ քաղաքակրթությունների կողմից ժամանակի մարտահրավերները հաղթահարելու գործընթացները՝ դիտարկելով այն որպես հասարկության զարգացման կարևոր բաղադրիչ:
7.2.4. Գնահատի անտիկ քաղաքակրթությունների ձեռքբերումները և ազդեցությունը արդի հասարակությունների վրա:
7.3.1. Վերլուծի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:
7.3.2. Հետազոտի և ներկայացնի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների անկման պատճառները:
7.3.3. Համեմատի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի առանձնահատկությունները:
7.3.4. Գնահատի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների ունեցած ներդրումը արդի աշխարհի ձևավորման վրա:
7.4.1. Վերլուծի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:
7.4.2. Հետազոտի և ներկայացնի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների անկման պատճառները:
7.4.3. Համեմատի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի առանձնահատկությունները:
7.4.4. Գնահատի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների ունեցած ներդրումն արդի աշխարհի ձևավորման վրա:

4.«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Առարկայի բովանդակության և ուսուցման մոտեցումները, սկզբունքներն ու ծրագրային փուլերը հիմնված են

1. **քաղաքակրթություն,**
2. **փոփոխություն,**
3. **գլոբալ փոխազդեցություն,**
4. **համակարգ**

հիմնական գաղափարների վրա, որոնք փոխկապվածության սկզբունքով քննության են առնում համաշխարհային պատմության ողջ շրջափուլը՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը:

«Համաշխարհային պատմություն» առարկան ուսուսմնասիրվում է հետևյալ 16 ենթահասկացությունների միջոցով.

«Կառավարում», «Զարգացում», «Պատմական կարևորություն», «Համակարգ», «Անհատ», «Հայրենիք», «Պատճառ-հետևանք», «Հեռանկար», «Պետություն», «Հավատ», «Նորարարություն», «Զև», «Ժամանակ, տեղ, տարածություն», «Հարաբերություններ», «Փոխկապակցվածություն», «Համագործակցություն»:

Խաչվող հասկացություններ

Սովորողների մոտ աշխարհի համապարփակ և գիտականորեն հիմնավորված տեսակետ կառուցելու համար ներառվել են նաև խաչվող հասկացություններ: Դրանք տարբեր ոլորտները կապելու միջոց են, քանի որ կիրառվում են հասարակագիտության և բնագիտության բոլոր ճյուղերում: Խաչվող հասկացությունները հենք են հանդիսանում հաասարակագիտական և բնագիտական տարբեր առարկաներից ստացված գիտելիքները փոխկապակցելու համար:

Խաչվող հասկացություններն են՝

- **Օրինաչափություն**
- **Պատճառ և հետևանք**
- **Մասշտաբ, համամասնություն, քանակ**
- **Կառուցվածք և գործառույթ**
- **Համակարգ և մոդել**

- **Էներգիա, նյութ**
- **Կայունություն և փոփոխություն**
- **Զարգացում**
- **Անհատ և հարաբերություններ**
- **Ժամանակ և տարածություն**
- **Անհատական և մշակութային արժեհամակարգ**
- **Համաշխարհայնացում:**

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում:

Դասավանդման մոտեցումներ

«Համաշխարհային պատմություն» առարկայի ուսումնառության հիմքում դրված է հետևյալը.

1. Հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն (հասկացությունն առարկայի հիմքում ընկած մեծ գաղափարներն են, որոնք ժամանակ, տարածություն և մշակութային սահմանափակումներ չունեն):
2. Հմտություններ.

- սովորողի ուսումնական հմտությունների զարգացում. քննադատական, վերլուծական, հատազոտական, ստեղծագործական մտածողություն,
- հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացում,
- ինքնակազմակերպման հմտություն,
- խնդրահարույց իրավիճակների լուծման հմտության զարգացում:

3. Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն:
4. Տարբերակված ուսումնառություն:
5. Իրական կյանքին առնչվող և խնդրահարույց հարցերի հետազոտման վրա հիմնված ուսումնառություն:

6. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հայտորոշիչ (ախտորոշիչ) գնահատումը նախնական գնահատումն է, որի նպատակն է պարզել սովորողների նախնական գիտելիքները, կարողությունները կամ հմտությունները՝ մինչև դասավանդումը:

Ուսուցանող գնահատումը հաճախ կոչվում է նաև ձևավորող գնահատում կամ գնահատում ուսումնառության համար: Այսպիսի գնահատումն ուղղված է սովորողների ուսումնառության բարելավմանը: Այն հնարավորություն է տալիս ուսումնառության ընթացքում բացահայտելու սովորողի թույլ և ուժեղ կողմերը, սովորողներին ուղղորդելու և դասավանդման հետագա ընթացքը պլանավորելու համար:

Ուսումնառության գնահատումը հաճախ կոչվում է ամփոփիչ գնահատում: Դրա նպատակն է ձեռք բերել ապացույցներ և տվյալներ, որոնք ցույց են տալիս ուսումնառության արդյունավետությունը: Սովորաբար ամփոփիչ գնահատումն իրականացվում է ժամկետի (քառորդ, կիսամյակ) կամ թեմատիկ միավորի վերջում: Տարեվերջյան քննությունները նույնպես ամփոփիչ գնահատման օրինակներ են: Դրանք սովորաբար արվում են պաշտոնական գրանցման համար և հաշվետվական նպատակ ունեն:

Ձևավորող (ուսուցանող) և ամփոփիչ գնահատումն իրականացվում է նախապես հրապարակված չափանիշների և սանդղակների համաձայն:

Ստուգումն ու գնահատումը նախատեսվում է իրականցնել տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: Առարկայի ուսումնառության համար կարևորում ենք.

1. գիտելիքի,
2. հետազոտական մոտեցումների,
3. հաղորդակցական հմտությունների,
4. մտածողության ձևերի գնահատումը:

Գնահատականի բաղադրիչները

Հիմնական դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի գնահատականի 40%-ը պետք է կազմի հիմնական

գաղափարների իմացությունը և ըմբռնումը, հմտությունների զարգացման մասնաբաժինը կազմելու է 30%-ը, 20%-ը՝ արժեհամակարգին, իսկ 10%-ը՝ կապը իրական կյանքի հետ առաջադրանքների ու հետազոտությունների պլանավորելուն և իրականացնելուն։

Ավագ դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի գնահատականի 30%-ը պետք է կազմի հիմնական գաղափարների իմացությունը և ըմբռնումը, հմտությունների զարգացման մասնաբաժինը՝ 40%-ը, 20%-ը՝ արժեհամակարգին, իսկ 10%-ը՝ կապը իրական կյանքի հետ առաջադրանքների ու հետազոտությունների պլանավորելուն և իրականացնելուն։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ. ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

1.1. Դասագիրքը որպես պատմական կրթության կարևոր միջոց

Դպրոցական դասագրքի բնութագիրը, բաղադրամասերը.

Դիդակտիկայում դասագիրքը բնորոշվում է որպես զանգվածային ուսուցման գիրք, որը շարադրում է տվյալ առարկայի ծրագրով նախատեսված բովանդակությունը և որոշում է ուսումնական գործունեության ձևերը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և այլ առանձնահատկություններ։

Հաճախ դասագիրքը հանդիսանում է դասի կառուցման հիմքը։ Բայց կան դասեր, որոնց ժամանակ այն օժանդակ դեր է կատարում կամ ընդհանրապես պետք չի գալիս։ Կարծիք կա, որ դասապրոցեսում դասագիրքն ընդհանրապես պետք չէ, անհրաժեշտ է հրաժարվել ավանդական դասագրքից։ Այնուամենայնիվ, մանկավարժների, մեթոդիստների մեծամասնությունը գտնում է, որ դասագիրքն անհրաժեշտ է ուսուցման գործընթացում։

Սովորաբար առանձնացնում են դպրոցական դասագրքի հետևյալ գործառույթները.

- Տեղեկատվական. բացահայտում է կրթության բովանդակությունը, տալիս է նյութի ծավալը յուրաքանչյուր դասի համար՝ հաշվի առնելով սովորողների տարիքը։
- Համակարգող. ապահովում է բովանդակության շարադրման հաջորդականությունը, համակարգում է այն։

- Ուսուցանող. դյուրացնում է գիտելիքների յուրացումն ու ամրապնդումը։
- Դաստիարակչական. իրականացնում է արժեքային համակարգի ձևավորման խնդիրները։

Դպրոցական դասագրքերն ունեն տարբեր կառուցվածքներ։ Ներկայումս ստեղծվում են բազմաստիճան դասագրքեր, որոնցում հաշվի է առնվում տարբերակված ուսուցումը։ Այդ մոտեցմամբ են գրված համաշխարհային պատմության սույն դասագրքերը։

Դասագրքի բովանդակությունը բաժանվում է հետևյալ մասերի՝ հիմնական (տեսական և փաստական նյութ), լրացուցիչ (տեղեկատվական), բացատրական (ծանոթագրություններ, մեկնաբանություններ)։ Հիմնական տեքստի միջուկը կազմում են կարևորագույն գաղափարները և հասկացությունները, տեսությունները, գործունեության ձևերի մասին տեղեկությունը։ Դասին նախապատրաստվելիս դասագրքի վերլուծության ժամանակ ուսուցչի համար կարևոր է բացահայտել հենքային գիտելիքները։ Տեղեկատվական նյութն օգնում է համոզիչ և տպավորիչ բացահայտել հենքային գիտելիքները։

Պատմության դպրոցական դասընթացում ամբողջ նյութը չի կարող շարադրվել միևնույն մանրամասնությամբ։ Ծավալունը, որպես կանոն, զուգակցվում է հակիրճ շարադրանքի հետ։ Հիմնական փաստերը տրվում են մանրամասնորեն, պատկերավոր, լրացվում են փաստաթղթերով և պատկերազարդումներով։ Հիմնական փաստերի միջև կապը ապահովող տեղեկությունները տրվում են հակիրճ։

Դասագրքի տեքստի բարդությունները կարող են լինել առարկայական, տրամաբանական և լեզվական։ Պատմական բովանդակության բարդության աստիճանը կախված է տեքստի եզրերով, հասկացություններով և տեսական բնույթի հետևություններով հագեցածությունից։

Դասագրքի կարևոր բաղադրիչներ են պատկերազարդումները, հարցերը և առաջադրանքները, փաստաթղթերը։ Պատկերազարդումները և գծանկարներն օգտագործվում են անցյալի պատկերներ ստեղծելու համար։ Դրանք զննական միջոցներով բացահայտում են գրքի բովանդակությունը։

Դասագրքի մեթոդական ապարատի հիմնական մասը կազմում են հարցերը և առաջադրանքները։ Դրանք օգնում են սովորողներին գիտակցված և խորությամբ յուրացնել դասի բովանդակությունը, իսկ ուսուցչին հնարավորություն են տալիս ղեկավարել սովորողների ուսումնական գործունեությունը։ Հարցերը լինում են տարբեր բնույթի և բարդության, ինչը թույլ է տալիս տարբերակել, որոշակիացնել սովորողների աշխատանքը։

Դասագրքի հետ աշխատանքը պատմության ժամերին

Դասագրքի հետ առաջին ծանոթացումը պետք է սկսել դրա վերնագրից, բացատրելով, թե ինչ են սովորելու երեխաները, ինչպիսին են դասագրքի ժամանակագրական շրջանները։ Այնուհետև ուսուցիչը ծանոթացնում է դպրոցական դասագրքի կառուցվածքին, դրա դասավորման յուրահատկություններին, տեքստերի տարբեր տեսակներին, հարցերին և առաջադրանքներին, ինչպես նաև ձևավորմանը և քարտեզներին։

Կարևոր է նաև բացատրել դասագրքի պայմանական նշանները և դրանցից օգտվելու կանոնները։

Առաջին դասերին կարելի է կիրառել տարրական դասարաններից աշակերտներին ծանոթ բացատրական ընթերցանությունը։ Այն ներառում է՝ կարդացածի բացատրություն և լրացում, նկարների վերլուծություն, զրույց։

Բացատրական ընթերցանությունը նպաստում է կարդացածի գիտակցված յուրացմանը և դրա ամրապնդմանը սովորողի հիշողության մեջ։ Ընթերցանության ընթացքում առանձնացվում են առանձին նախադասություններ, մտքեր, որոշվում է գլխավոր միտքը, ինչպես նաև տեքստի կապը պատկերազարդումների հետ։

Դասագրքի հետ տարվող աշխատանքները աստիճանաբար բարդանում են։ Երեխաները սովորում են գտնել փաստական նյութը (օրինակ՝հատուկ անուններ և տարեթվեր), դուրս գրել այն, գրավոր պատասխանել հարցերին և ընթերցել դրանք, պատասխանները ինքնուրույն ձևակերպել։

Դասագիրքն անհրաժեշտ է աշակերտներին նաև տնային աշխա-

տանքը ստուգելիս։ Հարցման ընթացքում նրանք դիմում են դասագրքին՝ տեղեկություն ստանալու համար, ճշտում են իրենց ընկերների պատասխանը՝ կարդալով տվյալ հատվածը դասագրքից։

Ուսուցչի առաջնահերթ խնդիրն է՝ սովորեցնել աշակերտներին առանձնացնել դասագրքի անհասկանալի մասերը, իրենց անծանոթ եզրերը։ Միջին դպրոցի ցածր դասարաններում կարևոր է պարզել, թե ինչ չափով են երեխաները հասկացել բոլոր բառերի և նախադասությունների իմաստը։ Կարևոր է սովորեցնել աշակերտներին բաց չթողնել անհասկանալի բառերը և արտահայտությունները, այլ գտնել դրանց բացատրությունները՝ դիմելով ուսուցչին կամ բառարաններին։

Սկսելով թեմայի ուսուցումը՝ ուսուցիչը առաջարկում է կարդալ թեմայի վերնագիրը, ապա՝ դասինը և դրա ենթավերնագրերը։ Այդպես աշակերտները ծանոթանում են նոր նյութի պլանին։ Պատմելիս ուսուցիչը կարող է նշել, որ իր ասածը կարող են գտնել դասագրքում, այդ դեպքում աշակերտները գտնում են այդ տեղը և կարդում։

Աշխատանք նկարների, եզրերի (տերմինների) և առանձնահատուկ տեքստերի հետ, հարցերի և առաջադրանքների դերը

Թեմայի վերաբերյալ հստակ և բովանդակալից պատասխաններ տալու համար օգնում են հարցերն ու առաջադրանքները։ Կարելի է առաջարկել նյութի մեջ գտնել հարցի պատասխանը և կարդալ կամ վերարտադրել սեփական բառերով։

Դասագիրքը օգնում է զարգացնել սովորողների ուշադրությունը։ Օրինակ՝ նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը առաջարկում է աշակերտներին կարդալ դասը և գտնել, թե ինչի մասին ինքը չի խոսել, նաև՝ ինչ լրացուցիչ տեղեկություններ է տվել։

Դասագրքին ուսուցիչը անդրադառնում է նաև այն ժամանակ, երբ սովորեցնում է եզրակացություններ անել։ Նրա օգնությամբ սովորողները կատարում են հետևություններ, ապա համեմատում դասագրքում տրված հետևությունների հետ։

Դասագրքից աշակերտները կարող են նաև գտնել ուսուցչի կատարած եզրահանգումների ապացույցներ։ Հնարավոր է նաև աշակերտների

կողմից նոր նյութի ինքնուրույն ուսուցումը։

Դասերի ժամանակ մշտապես օգտագործվում են դասագրքերի քարտեզները։ Պատի քարտեզով ցուցադրումը ուղեկցվում է դասագրքի քարտեզում որոշ օբյեկտներ գտնելով։

Միջին դպրոցում կարևոր տեղ է գրավում դասագրքի տեքստի վերարտադրումը։ Այն պետք է կապակցված և հաջորդական լինի։Պատմելիս օգտվում են նաև տեքստի նկարներից։ Նոր նկարները պետք է բացատրել աշակերտներին, ընդգծելով, որ երբեմն դրանք կարող են չհամապատասխանել իրականությանը, երևակայական լինել։

Սովորողները պետք է կարդան նկարի տակ գրվածը (բացատրությունը), որոշեն պատկերի բնույթը (լուսանկար է, թե նկար, պատմական փաստաթուղթ է, թե վերականգնված)։ Կարող են օգտագործվել պատի նկարներ, կինոհատվածներ և այլն։ Երբեմն սովորողները դասագրքով կազմում են քաղաքների նկարագրություն։

Նկարների հետ աշխատելու համար կան հատուկ առաջադրանքներ, օրինակ՝ նկարի շուրջ կազմել պատմվածք, բացատրել փաստերը, որոնք կազմում են սյուժեն, վերանկարել ոչ բարդ նկարները, վերարտադրել գծապատկերները։

Ընդհանրացնելով նշենք, որ դասագրքի հետ աշխատելիս աշակերտները պետք է կարողանան.

ընդգծել կարևորը տեքստի հատվածում,
կողմնորոշվելու համար օգտագործել տեքստի վերնագիրը,
վերարտադրել տեքստը՝ օգտվելով նկարներից,
կազմել տեքստի պարզ պլան,
դասի մեջ առանձնացնել կարևորը,
պատմելիս օգտագործել գիտելիքների մի քանի աղբյուր,
ուսումնասիրել հարցը զարգացման մեջ,
շարադրել մի քանի դասի նյութ,
կազմել բարդ պլան,
օգտագործել զննողական տարբեր միջոցներ։

1.2. Պատմության ուսումնական նյութի կառուցվածքը և դրա ուսումնասիրության եղանակը

Փաստերը պատմության ուսուցման ընթացքում

Պատմական կրթության բովանդակության գլխավոր բաղադրիչներից է գիտելիքների համակարգը: Գիտելիքները ստեղծում են հասարակության զարգացման գիտական պատկերը, տեղեկատվություն և պատկերացում տալիս պատմական իրողությունների մասին և այլն:

Պատմության ուսումնական նյութը ներառում է պատմական գիտության բովանդակությունը և պատմական նյութի հետ աշխատելու միջոցները: Ուսուցման ընթացքում սովորողները ձեռք են բերում պատմական գիտելիքների մասնիկներ, գործածելով այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են փաստը, երևույթը, իրադարձությունը, ընթացքը: Նրանք, օրինակ, բացահայտում են իրադարձությունների էությունը, անցկացնում դրանց համեմատություն:

Փաստ բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է կատարված, իրագործված: Պատմության մեջ փաստը դիտարկում են որպես տեղի ունեցած իրականության հատված: Օրինակ՝ փաստ է թուրքերի կողմից 1453 թ. Կ. Պոլսի գրավումը:

Փաստը անկրկնելի է, այն հնարավոր չէ նույնությամբ վերարտադրել և կրկնել: Դրանում է նրա յուրահատկությունը:

Պատմության ուսուցման ընթացքում փաստերը անգնահատելի են ոչ միայն ինքնին. դրանք անհրաժեշտ են պատմական կապերը համադրելու և որոշելու համար:

Փաստերի ընդհանրացումը և դասակարգումը (համակարգումը) պատմության ուսուցման գործիքն է:

Եզակի փաստերը միատարր չեն, դրանք կարելի է բաժանել առաջին և երկրորդ կարգի փաստերի:

Ավելի բարդ փաստերը (I կարգի) բացահայտվում են քիչ բարդության փաստերի միջոցով (II կարգի): Օրինակ՝ առաջին կարգի փաստերից է Առաջին համաշխարհային պատերազմը, երկրորդ կարգի՝ Վերդենի ճակատամարտը:

Այդ պատճառով դասին նախապատրաստվելիս պետք է ընտրել հիմնական և հենակետային փաստերը, և ընդգծել այն փաստերը, որոնք սովորողները պետք է հիշեն: Հիմնական փաստերը բացահայտվում են ավելի խորությամբ և մանրամասնորեն: Դասաժամին բերված յուրաքանչյուր փաստ պետք է բացահայտի հարցի էությունը:

Դասի համար փաստեր ընտրելիս պետք է հաշվի առնել նաև դրանց գիտական հավաստիությունը:

Նոր նյութի բացատրման փուլում պետք չէ օգտագործել փաստեր, որոնք կդժվարացնեն վերլուծությունը և կշեղեն սովորողների մտքերը: Պետք է հաշվի առնել նաև փաստերի և ընդհանրացումների հարաբերակցությունը: Պատմության դասավանդումը կվերածվի փաստագրության, եթե գերակշռեն կոնկրետ փաստերը, և հակառակը:

Իրադարձությունները՝ դրանք կոնկրետ եզակի փաստերն են: Դրանցից են՝ օրինակ՝ Գավգամելայի ճակատամարտը, Ձիրավի ճակատամարտը: Այդ իրադարձությունները կատարվել են կոնկրետ պայմաններում, որոշակի մարդկանց մասնակցությամբ, դրանք խիստ տեղայնացված են տարածության և ժամանակի մեջ: Դրանց ուսուցումը օգնում է հասկանալ և յուրացնել տիպիկ երևույթները:

Երևույթներ են կոչվում ընդհանուր հասկացությունները՝ հեղափոխություններ, ապստամբություններ, առանց վերաբերվելու կոնկրետ փաստերի, առանց տեղի, ժամանակի և մասնակիցների մատնանշման: Տվյալ դեպքում նկատի ունենք, որ հեղափոխությունը հասարակության զարգացման որակական փոփոխություն է, իսկ ապստամբությունը՝ զանգվածային զինված ելույթ: Պատմական երևույթները հաճախ արտացոլում են պատմական ժամանակաշրջանի բնորոշ գծեր, օրինակ՝ ավատատիրությանը բնորոշ են կռոը և բահրան:

Ընթացքը իրավիճակների զարգացման հաջորդական փոփոխությունն է: Պատմության մեջ դա մասնակի փոխկապակցված փաստերի շղթա է, որոնց կապողը պատճառները և հետևանքներն են: Օրինակ՝ արդյունաբերական հեղաշրջումը դա մանուֆակտուրաներից մեքենայական արտադրությանը անցնելու ընթացքն է:

Ընթացք է նաև պատմության ուսուցումը: Այն սկսվում է փաստերի յուրացումով:

Նոր թեմայի հանդեպ անհրաժեշտ հետաքրքրությունը կապված է նորության, անսպասելի համեմատությունների, նյութի նորովի մատուցման և գործունեության եղանակների փոփոխման հետ։

Մտապատկերներ

Ուսուցանվող փաստերի հիման վրա սովորողների գիտակցության մեջ ձևավորվում են կոնկրետ պատկերացումներ, պատմական հասկացությունների որոշակի համակարգ։ Հետազոտողները կարողացել են ապացուցել, որ սովորողների մոտ ճիշտ, լիարժեք պատկերացումների ձևավորման համար բավական չէ միայն պատկերների ցուցադրումը և դրանց ուղեկցող խոսքային բացատրությունը։ Անհրաժեշտ է նաև կիրառել հնարներ, որոնք թույլ են տալիս այդ պատկերացումները ամրապնդել և ճշտել։ Այդ հնարներից են խոսքային նկարագրությունը, նկարչությունը կամ գրաֆիկական (գծագրային) վերարտադրումը։ Դարաշրջանին համարժեք կերպարների ստեղծումը հատկապես կարևոր է 6–7 դասարաններում։ Հակառակ դեպքում, նրանք կարող են արդիականացնել անցյալը (Հին Հռոմի ստրուկները վատ էին ապրում, նրանց հագուստը պատառոտված ջինսերն էին կամ եզը սկսեցին օգտագործել որպես տաքսի...)։

Գիտնականները առանձացնում են պատմական պատկերացումների երեք ձևեր։ Դրանք պատկերացումներն են՝ ա) անցյալի փաստերի մասին (մարդկանց նյութական, սոցիալ–քաղաքական, հոգևոր–մշակութային կյանքը), բ) պատմական ժամանակի մասին (պատմական իրադարձությունների և երևույթների շարունակականությունը և հաջորդականությունը), գ) պատմական տարածքի մասին (իրադարձությունները գործողությունների կոնկրետ տեղի հետ կապելը)։

Եթե սովորողները յուրացնում են ուսումնական նյութը, չհենվելով կոնկրետ մտապատկերների վրա, դա հանգեցնում է ուսուցման վերբալիզմի (“վերբալիս” (լատ.) –բանավոր, խոսքային)։ Վերբալ ուսուցման ժամանակ պատմական փաստերը հաղորդվում են չոր, առանց դրանց իմաստը բացատրելու։

Հասկացություններ

Պատմական հասկացություններն անհրաժեշտ են փաստերի բացատրման և դասակարգման, ինչպես նաև այլ հասկացությունների իմաստավորման համար։

Հոգեբանները ապացուցել են, որ հասկացությունները կարող են յուրացվել միայն որոշակի հաջորդականությամբ՝ զննական պատկերացումներից դեպի առաջնային հասկացություններ, ավելի հեշտից դեպի դժվարը։ Պատմական հասկացություններ ստեղծելու հնարներից են պատմական նկարի բովանդակության նկարագրությունը, փաստի կամ իրադարձության քննարկումը, վերլուծությունը, սովորողների գործնական աշխատանքը (նկարչություն, մակետների պատրաստում և այլն)։

Օրինակ՝ տարրական դասարաններում սովորողները ծանոթանում են արորի մակետին։ Սովորողներն իմանում են, որ արորը՝ հողագործական աշխատանքային գործիք է։ Ուսուցիչը հանձնարարում է նկարել արորի գծանկարը։ Այնուհետև նշում է, որ բացի դրանից կան շատ այլ աշխատանքային գործիքներ։ Սակայն “աշխատանքային գործիք” հասկացությունը ակտիվորեն օգտագործվում է միջին դասարաններում։

Այսպիսով՝ որպես առաջնային սահմանում ուսուցիչը տալիս է սահմանվող հասկացության հատկանիշները կամ ասում դրա բաղադրիչները։ Բացատրելով “մշակույթ” բարդ հասկացությունը՝ ուսուցիչը սկզբում խոսում է գրի, նկարչության, գիտական գիտելիքների մասին, չտալով դրա սահմանումը, քանի որ այն պահանջում է տեսական իմաստավորում և կապ հասարակագիտական գիտելիքների հետ, իսկ դա հասկանալի է միայն բարձր դասարանցիներին։ Հեշտ չէ տալ նաև “պետություն” հասկացության սահմանումը։ 7–րդ դասարանի “Հին աշխարհի պատմության” մեջ բացատրվում է, որ պետության ստեղծման նպատակը հասարակական աշխատանքների կազմակերպումն է, բնակչության պաշտպանությունը պատերազմների ժամանակ։ Հետագայում դա ճշգրտվում է և ավելի խորությամբ մատուցվում՝ “Պետությունն առաջին հերթին հասարակությունը կառավարող, նույն հասարակության շահերը պաշտպանող ապարատ է”։

Եզրեր (տերմիններ)

Ձևավորվող հասկացությունները արտահայտվում են բառ–եզրերի միջոցով։ Եզրը դա այն է, ինչ նշանակում է տվյալ բառը։ Յուրաքանչյուր նոր եզր պահանջում է բովանդակության բացում, պարզաբանում։ Եզրերը բացատրվում են տարբեր ձևերով։ Օրինակ՝ եթե դրանք առարկա են նշանակում, ապա ուսուցիչը կարող է ուղղակի ցույց տալ դրա պատկերը։ Կամ բառերի բացատրությամբ՝ առնտուր – առ և տուր, քաղաքացի — քաղաք բառից։ Աշխարհագրական եզրերը կարելի է բացատրել թարգմանելով.

Թերմոպիլ — տաք դարպասներ, “Պելոպոնես — Պելոպսի կղզի, Մեսոպոտամիա — Միջագետք, բանկրոտ՝ իտալերեն banka (նստարան) և rotta (ջարդել) — ջարդված նստարան. միջնադարյան Իտալիայում, եթե վաշխառուին բռնացնում էին խաբեության մեջ, ապա նրա գլխին էին ջարդում այն նստարանը, որի վրա նստած էր։ Այստեղից դժվար չէ բացատրել բանկ բառի ծագումը։ ***Ցար*** բառը ծագել է լատիներեն կեսար, իսկ դա էլ իր հերթին Հուլիոս Կեսարի հատուկ անունից։

1.3. Սովորողների ճանաչողական կարողությունների զարգացումը

Ճանաչողական կարողությունների զարգացումը, գիտելիքների ձևավորումը և դաստիարակությունը ուսուցման երեք իրար հետ կապակցված կողմերն են։ Հատկապես՝ ուսումնական նյութի ծավալը որոշելիս կարևոր է նկատի ունենալ սովորողների զարգացման հետ կապված աշխատանքների անցկացումը, անհրաժեշտ է դաստիարակության խնդիրների հատուկ մշակում։

Ըստ Վիգոտսկու և Ռուբինշտեյնի՝ ուսուցումն ու դաստիարակությունը չեն հանգեցնում զարգացմանը, սակայն այն տեղի է ունենում ուսուցման և դաստիարակության ընթացքում։ Երեխան զարգանում է սովորելով։ Պատմության դասավանդման ցանկացած ձև այս կամ այն չափով զարգացնում է սովորողներին։ Սակայն զարգացումը պետք է բավարար լինի, հակառակ դեպքում տեղի է

ունենում անհամաչափություն սովորողների ճանաչողական ուժերի և ուսումնական աշխատանքի ծավալի մեծացման և բարդացման միջև։

Անձի ճանաչողական հատկությունների (ընկալում, դատողություն, հիշողություն և այլն) դրական փոփոխությունների հետևանքով զարգանում է սովորողի նույն ժամանակում ավելի շատ, շուտ և խորը յուրացման ընդունակությունը։ Հետևաբար՝ ուսուցումը հանդիսանում է իսկապես զարգացնող, եթե այն ձևավորելով գիտելիքներ և դաստիարակելով՝ կատարելագործում է անձի ճանաչողական կարողությունները և դա անում է նպատակաուղղված։

Ուսուցումը զարգացնում է դատողությունը, եթե սովորողը ոչ միայն ձեռք է բերում պատմական գիտելիքներ, այլ նաև յուրացնում է այդ գիտելիքները ձեռք բերելու միջոցները (սովորում է սովորել)։

Ուշադրություն

Հաջող ընկալումը, մտածողությունը և հիշողությունը անհնար են առանց տրված օբյեկտների վրա կենտրոնանալու ունակության։

Օբյեկտի վրա կենտրոնանալու գործողությունը կատարում է ուշադրությունը։ Այն հանդիսանում է ցանկացած ճանաչողական գործունեության պարտադիր պայման։ Ուշինսկին ուշադրությունը համարում էր միակ դարպասը, որի միջով գիտելիքները կարող են մտնել մարդու գիտակցության մեջ։

Ուշադրություն են գրավում ամեն տեսակ անսովոր, հետաքրքիր, կարևոր, նոր բաները։ Միևնույն ժամանակ պետք է ձևավորել սովորողների մոտ մտածված, ինքնակամ կենտրոնանալու ունակությունը այն նյութի վրա, ինչը պետք է յուրացնել կամ կատարել։ Կարևոր է սովորեցնել աշակերտներին ուշադրությունը համաչափ բաշխել։ Դա կարելի է անել հետևյալ կերպ.

1. Ցածր դասարաններում սովորողները լսում են ուսուցչի ոչ ծավալուն պատմածը, այնուհետև դրա հիման վրա ստանում առաջադրանք և բանավոր հետևություններ անում։

2. Նույն գործողությունները կատարում են ավելի դանդաղ տեմպով և միաժամանակ (բանավոր հետևությունը անում են ուսուցչի պատմելուն զուգընթաց)։

3. Նույն գործողությունները կատարում են պատմելու, զրույցի նոր-

մալ տեմպի ժամանակ։

4. Երկու կամ երեք ավելի բարդ գործողություններ (ըստ բովանդակության, ծավալի, աշխատանքի տեմպի) իրականացվում են միաժամանակ կամ հաջորդաբար։

Շատ կարևոր է ուշադրության փոխարկումը, այսինքն՝ գործունեության մյուս տեսակներին արագ անցում կատարելու ունակությունը։ Օրինակ՝ ուսուցչի գունեղ պատմելուն հետևում են ամփոփումներ, որոնք այդքան էլ չեն գրավում ուշադրությունը։

Այդ իրադրությունից ելքը կարող է լինել հետևյալը.

1. Անցնելով նոր, անհետաքրքիր կամ պակաս հետաքրքիր նյութին՝ նպատակահարմար է՝ ա) դադար տալ զգացմունքային լիցքաթափման, հանգստի համար, բ) հստակ նշել նոր նյութին անցնելը և դրա կարևորությունը, գ) փոփոխել գիտելիքների հաղորդման աղբյուրը, դ) առաջադրանք տալ ինքնուրույն գործունեության համար։

2. Ցանկալի է, հնարավորության դեպքում, ավարտել դասը ուշադրության գագաթնակետ պահանջող նյութով։

Ընկալում

Պատմության ուսուցման ընթացքում սովորողները ծանոթանում են աշխարհամասերի, երկրների, մարդկանց կյանքի պայմանների և մշակույթի տարբեր մակարդակների, բազմաթիվ իրադարձությունների և մարդկանց հետ, և այդ ամենը անընդմեջ շարժման, փոփոխման մեջ։ Այդ իսկ պատճառով պատմության համար կարևոր է ընկալման լիարժեքությունը, առանց դրա հնարավոր չէ յուրացնել հասարակության զարգացման ընթացքը, նրա կյանքի առանձնահատկությունները տարբեր դարաշրջաններում։ Իհարկե, լիարժեք ընկալման առաջին պայման է հանդիսանում սովորողներին կոնկրետ, պատկերավոր, գունեղ, բավականին հարուստ պատմական նյութի հաղորդումը։ Դրա հետ մեկտեղ՝ նորմալ հոգեբանա-մանկավարժական պայմանների ստեղծումը ընկալման համար։

Լսողական և տեսողական արատներ ունեցող երեխաները պետք է նստեն առաջին շարքերում։ Ինչպես ուսուցչի, այնպես էլ պատասխանողի խոսքը միայն այն ժամանակ կընկալվի ամբողջ դասարանի կողմից,

եթե չստիպի լարել լսողությունը կամ չհոգնեցնի բարձրությամբ կամ միալարությամբ։

Նյութի ընկալումը ավելի արդյունավետ է, եթե ազդում է ընկալման մի քանի տեսակների վրա։ Պատմության ուսուցչի համար կարևոր է հիշել և զուգակցել սովորողների լսողական, տեսողական և մարմնաշարժական (կինեստետիկ) ընկալումները։

Պատմական իրադարձությունների ընկալման ընթացքում հատկապես կարևոր է զարգացնել դիտողականությունը՝ հասարակական կյանքում նորը նկատելու կարողությունը։ Դրա համար կարևոր միջոց են ինքնուրույն աշխատանքների հանձնարարությունները։

Սովորողների հմտություններ (ընկալումներ)

Տեսողական	Լսողական	Մարմնաշարժական (կինեստետիկ)
• չեն սիրում շատ խոսել	• իրենք իրենց հետ են խոսում	• շատ շարժուն են
• լավ կազմակերպված են	• ուշադրությունը հեշտ է շեղել	• կարդալ չեն սիրում
• սիրում են կարդալ	• դժվարանում են գրավոր աշխատանք կատարելիս	• շատ են սիրում ինչ-որ գործողություն կատարել
• մտապահում են գրաֆիկական պատկերները	• սիրում են, որ գրվածը կարդան իրենց համար	• մտածելիս անընդհատ քայլում են
• բանավորը լավ չեն ընկալում	• մտապահում են քայլ առ քայլ	• սիրում են շոշափել առարկան
• ուղղագրությունից լավ են	• ուղղագրությունից հիմնականում կաղում են	• ուղղագրությունից շատ թույլ են

Հիշողության և պատկերացումների զարգացում

Պարտադիր է տարբերել ինքնակամ (երբ սովորողը գիտակցաբար նպատակ է դնում հիշել) և ակամա հիշողությունը (երբ նյութը հիշվում է առանց այդպիսի նպատակի)։

Անհրաժեշտ է՝

ա) հենվել հիշողության տարբեր ձևերի վրա՝ խոսքային–տրամաբանական, պատկերավոր (այդ թվում՝ լսողական և տեսողական), շարժական, հուզական,

բ) ձևավորել հիշողության հետևյալ հատկանիշները՝ ամբողջականություն, ճշգրտություն, պատրաստակամություն, այսինքն՝ նյութը արագ տրամադրելու ունակություն։

Ինչպես պարզել են հետազոտությունները, սովորողները խառնում են որոշ իրադարձություններ, հասկացություններ, ոչ թե այն պատճառով, որ մոռացել են, այլ որովհետև չեն հասկացել, և այդ պատճառով փոխարինում են դրանք այլ բառերով, հասկացություններով, որոնք իրենց թվում են համարժեք։ Օրինակ՝ Արշակունիներ–Արտաշեսյաններ։

Անհրաժեշտ է տարբերել երկարատև ու կարճատև հիշողությանը ներկայացվող պահանջները։ Երկարատև հիշողության համար պետք է առանձնացնել ամենակարևորը, բացի այդ՝

ա) ուղղակի զգուշացնել սովորողներին՝ այս թվերը, անունները, իրադարձությունները պետք է լավ հիշել,

բ) առանց զգուշացնելու հարցնել վաղուց անցածը,

գ) կիրառել գիտելիքները նոր նյութ սովորելիս,

դ) համեմատել, դասակարգել, ամփոփել նյութը, դրա գլխավոր դրույթները ներառել աշխարհայացքի համակարգում։

Հիշելու կարողությունն ամրապնդելու համար կարևոր է տնային աշխատանքի կատարումը։ Աշակերտները հիմնականում սովորում են առանձին հատվածներ, պարբերություններ։ Պետք է հետևողականորեն հասնել նրան, որ ծանոթանան ամբողջ դասի հետ (դա թույլ է տալիս պարզել բովանդակությունը, գլխավոր գաղափարները), իսկ հետո անցնել երկրորդական աշխատանքին՝ դասի առանձին հատվածներին՝ անդրադառնալով անուններին, թվերին։

Մյուս սխալը նյութի բազմակի ընթերցումը և երկակի պատմելն է: Ավելի արդյունավետ է հակառակը: Հիշելուն շատ է օգնում սովորողների մտավոր գործունեությունը: Կարելի է կազմել պլան, սխեմա, աղյուսակ: Ընդ որում՝ կարևոր է տվյալ փաստի կապը այլ փաստերի հետ, ինչքան դրանք շատ են, այնքան հեշտ է հիշել:

Նորի լավագույն յուրացման համար անհրաժեշտ է կատարել գիտելիքները պահպանելու գործողություններ: Կարևոր է պարբերաբար կրկնել գլխավոր փաստերը: Պետք է ձևավորել հիշելու կարողությունը հարցերի և տրամաբանության միջոցով: Թույլ չտալ նայել գրքին: Եթե հարցերը և ուսուցչի օգնությունը նպատակին չեն ծառայում, հարցնել այլ աշակերտի, միայն վերջում՝ ուսուցչին:

Պատկերացումը (երևակայությունը) հարստացնում է մյուս հոգեբանական պրոցեսների գործունեությունը, անխզելիորեն կապված է մտածողության և հիշողության հետ, կարևոր է ինքնին և պատմություն դասավանդելիս պետք է դրան պատշաճ տեղ հատկացնել: Պատմությունը ծանոթացնում է անցյալի իրադարձություններին, իսկ ընկալման ամբողջականությանը հասնում ենք սովորողների երևակայության օգնությամբ: Հատկապես կարևոր է ստեղծագործական երևակայությունը:

Երևակայության զարգացմանը նպաստում են մի շարք հնարներ. երևակայական ճանապարհորդություն կատարելը, էքսկուրսիաները քաղաքում, նկարների դիտումը: Շատ կարևոր են ինքնուրույն աշխատանքները:

1.4. Պատմության ուսուցման զննական միջոցները

Զննականության տեսակները

Ուսուցման ընթացքում առարկաների անմիջական ընկալման կամ պատկերների զննության օգնությամբ սովորողների մոտ ձևավորվում են պատմական անցյալի վերաբերյալ պատկերացումներ և հասկացություններ: Զննականության սկզբունքը XVII դ. ձևակերպել և հիմնավորել է Յ. Ա. Կոմենսկին: Այդ սկզբունքը արդիական է նաև մեր օրերում:

Ըստ արտաքին հատկանիշների դասակարգման՝ մեթոդիստները

առանձնացնում են տպագիր, էկրանային ձայնային ուսուցման միջոցները: Սակայն հաճախ զննականությունը դասակարգում են ըստ բովանդակության և պատմական կերպարի բնութագրի՝ առանձնացնելով առարկայական, պատկերային և գծագրական զննական պարագաներ:

Ըստ բովանդակության դասակարգված զննական պարագաների մեջ մտնում են.

- Բնական հուշարձանային զննականություն. իրական պատմական հուշարձաններ և հիշարժան վայրեր (Հին եգիպտական դամբարաններ, Կոլիզեում, Էրեբունի, Զվարթնոց, Գառնի...):
- Նյութական մշակույթի իրական առարկաներ (հնագիտական գտածոներ, նյութական մնացորդներ՝ աշխատանքի գործիքներ, հացահատիկ, ոսկորներ, դրամներ, զենքեր, զարդեր...):
- Հատուկ պատրաստված առարկայական զննականություն (մակետներ, մոդելներ, աշխատանքի և կենցաղի առարկաների վերականգնումներ):
- Պատկերային զննականություն (ուսումնական քարտեզներ, նկարներ):
- Գծագրական զննականություն (սխեմատիկ նկարներ, պատմական քարտեզներ, սխեմաներ, գծագրեր, դիագրամներ):
- Ուսումնական տեխնիկական միջոցներ՝ կինոֆիլմեր, դիաֆիլմեր, ձայնագրություններ, սեղմասկավառակներ և այլն:

Առարկայական զննականությունը ստեղծում է պատմական հուշարձանների իրական պատկերներ: Հնարավորություն է տալիս սովորողներին զգալ դարաշրջանի մթնոլորտը:

Ուսումնական նկարը պատմության դասերին

Պատկերային զննականության մեջ կարևոր տեղ են գրավում ուսումնական նկարները՝ զննական պարագաներ, որոնք հատուկ ստեղծվում են նկարիչների կողմից դպրոցական դասընթացի թեմաներին համապատասխան:

Ուսումնական նկարները բաժանվում են ըստ իրադարձությունների, տիպականության և պատմամշակութային:

- Ըստ իրադարձությունների նկարները տալիս են պատկերացում կոնկ-

րետ եզակի իրադարձության մասին։ Դրանք հաճախ պահանջում են սյուժեի պատմում։ Օրինակ՝ Ռոյտերի “Ժաննա դ’Արկի մուտքը Օռլեան”, Քսենոֆոնտովի “Սպարտակի ճակատամարտը հռոմեական ջոկատի դեմ”, Խանջյանի “Ավարայրի ճակատամարտը” և այլն։

- Տիպային նկարները վերարտադրում են կրկնվող պատմական փաստեր, իրադարձություններ, որոնք բնութագրում են ուսումնասիրվող ժամանակաշրջանը։ Օրինակ՝ “Տաճարային տնտեսությունը Եգիպտոսում”, “Ջորդանո Բրունոյի այրումը” և այլն։
- Պատմամշակութային նկարները ծանոթացնում են կենցաղի առարկաների, նյութական մշակույթի հուշարձաններին։ Նրանցում կարող են պատկերված լինել ճարտարապետական հուշարձաններ, ճարտարապետական ոճեր, տարբեր ժամանակների քանդակներ և այլն։

Դասի ժամանակ նկարն օգտագործվում է տարբեր նպատակներով՝ որպես գիտելիքի աղբյուր կամ ուսուցչի պատմածի տեսանելի հենք, որպես պատմածի իլյուստրացիա կամ ամրապնդման միջոց։

Պատմական անհատների նկարներ ցուցադրելիս նկարագրվում է տվյալ անհատը. դրա մեջ կարող են մտնել նրան ճանաչողների հուշերը, նրան վերաբերող փաստաթղթեր, նամակներ...

Հնարավոր է “Գիտե՞ս արդյոք պատմական գործիչներին” մրցույթի անցկացում։ Մի տարբերակը՝ ճանաչել պատմական գործչին և պատմել նրա գործունեության մասին, երկրորդը՝ երկու նկարներից որոշել, թե ում է պատկանում դասագրքից բերված արտահայտությունը։ Ուսումնական

նկարները կարելի է կիրառել սովորողների գիտելիքների ամփոփման և ամրապնդման համար։ Այդպես օրինակ՝ աշակերտներին տրվում են նկարներ և առաջարկվում տեղադրել ըստ ժամանակագրական հաջորդականության։

Գրաֆիկապայմանական զննականության կիրառումը

Դրանցից են սխեմաները, գծագրերը, դիագրամները, ապլիկացիաները, սխեմատիկ նկարները։

Գրատախտակին կավիճով կատարված նկարը բանավոր պատումի ընթացքում ծառայում է որպես տեսողական հիմք։ Որպես կանոն, դա

շատ պարզ, կենդանի, սլացիկ նկար է, որը վերարտադրում է մարդկանց, ճակատամարտերի և այլ պատկերներ։ Իրական պատկերը ստեղծելու համար նպատակահարմար է համադրել սխեմատիկ նկարը իլյուստրացիայի կամ լուսանկարի հետ։

Նկարի հետ միասին կարող է օգտագործվել ապլիկացիան։

Դրանք հաճախ են օգտագործվում ցածր դասարաններում։

Պատմության ուսուցման տեխնիկական միջոցներ

Դրանց թվին են պատկանում ստատիկ զննական պարագաները. Էկրանային (կինոֆիլմ կամ կինոհատված, ուսումնական տեսաերիզներ, դիաֆիլմեր), տեսաձայնային (ձայնագրություններ, սեղմասկավառակներ, աուդիո կամ համակարգչային)։ Մեծ հնարավորություններով է օժտված համակարգիչը։ Աշակերտը որևէ հերոսի հետ ճանապարհորդում է գրաֆիկական տարածության և ժամանակի մեջ։

Քարտեզագրական զննական պարագաներ

Պատմական քարտեզները ստեղծվում են աշխարհագրականների հիման վրա, դրանք պատմական իրադարձությունների կամ ժամանակաշրջանների փոքրացրած ամփոփ պատկերանշանային արտահայտումն են։ Ամենահին քարտեզները ստեղծվել են Բաբելոնում և Եգիպտոսում Ք. ա. III–I հազարամյակներում։

Պատմական քարտեզները տարբերվում են աշխարհագրականներից։

Սովորողներին ծանոթ աշխարհագրական քարտեզների գույները պատմականների վրա այլ նշանակություն են ստանում։ Պատմական քարտեզների առանձնահատկություններից է իրադարձությունների դինամիկան (զարգացումը)։ Պատմական քարտեզների վրա հեշտ է տեսնել պետությունների առաջացումը, նրանց տարածքային փոփոխությունները, կամ զորքի տեղաշարժի ճանապարհը։

Պատմական քարտեզները տարբերակվում են՝ ըստ տարածքի ընդգրկման (համաշխարհային, մայրցամաքային, պետությունների քարտեզներ), ըստ բովանդակության (ամփոփիչ և թեմատիկ), ըստմասշտաբի (մեծամասշտաբ, միջին և մանրամասշտաբ)։

2. ՄԵԹՈԴՆԵՐ, ՀՆԱՐՆԵՐ, ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ուսուցման մեթոդները և դրանց դասակարգումը

ա) Ուսուցման մեթոդներ: Պատմական նյութի դասավանդման մեթոդների առանձնահատկությունները

Պատմության ուսուցումը չի կարելի կազմակերպել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդները ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոց են:

Ինչպես ասում էր հայտնի մանկավարժ Մ. Ն. Սկատկինը մեթոդը՝ դա ճանապարհ է, որով ուսուցիչը աշակերտին տանում է անգիտությունից դեպի գիտելիք, անկարողությունից դեպի կարողություն, նրա մտավոր ուժերի զարգացման ուղի: Մեթոդները պատասխանում են ինչպե՞ս սովորեցնել հարցին: Ցանկացած ուսուցման մեթոդ ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրավորված արդյունք: Դասավանդման մեթոդի սուբյեկտը և օբյեկտը աշակերտն է:

Շատ հազվադեպ է պատահում որևէ մեթոդի մաքուր կիրառումը:

Վերջին տասնամյակներում պատմության մեթոդիկայում մշակվել և կիրառվում են ուսուցման նոր մեթոդներ: Ներկա փուլում դպրոցին պետք են ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները, հետևապես նաև՝ տեսական մտածողությունը: Բացի դրանից՝ մեթոդները ուսուցմանը պետք է տան զարգացնող բնույթ:

Եվ հաշվի առնելով այս անհետաձգելի խնդիրները՝ մի շարք դիդակտիկներ սկսեցին որոնել ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ: Պ. Ս. Լեյբենգրուբը պատմության ուսուցման մեթոդները դասակարգել է ըստ ուսուցման նպատակների, տրամաբանական կատեգորիաների, սովորողների գիտելիքներ ձեռք բերելու միջոցների, ուսուցչի և սովորողների ուսումնական գործունեության բնույթի:

Դիդակտիկներ Մ. Ն. Սկատկինը և Ի. Յա. Լերները, որպես արդյունավետ մեթոդներ, առաջարկեցին բացատրական–ցուցադրական, ռեպրոդուկտիվ (վերարտադրական), մասնակի–

որոնողական և հետազոտական մեթոդներ։ Դանիլովը և Եսիպովը առաջարկեցին նոր գիտելիքների ձեռքբերման գործում հմտություններ և կարողություններ մշակող, ստուգող և գնահատող մեթոդներ։ Մահմուտովը կարևորեց գիտելիքներն արթնացնող ու համախմբող, հրահանգչական, պրոբլեմային շարադրանքի, էվրիստիկական զրույցի, հետազոտական մեթոդները։ Սակայն դրանցից ո՞ր համակարգը պետք է համարել ավելի արդյունավետ։ Չի կարելի մեթոդների որևէ համակարգ համընդհանուր դարձնել։ Ավելի ճիշտ կլինի մեթոդների համակարգը զուգակցել իրար։ Պատմության ուսուցչի խնդիրն է դասավանդելիս կիրառել ժամանակակից առաջավոր մեթոդներն ու հնարները։

Պատմության դասավանդման հաջողության կարևոր պայմաններից մեկը մեթոդի ճիշտ ընտրությունն է։

Ինչպես մյուս առարկաների, այնպես էլ պատմության ուսուցման մեջ մեթոդների ընտրության հարցը մանկավարժական բարդ խնդիր է, որի ճիշտ լուծումից է կախված դասի և ուսուցման արդյունավետությունը։

բ) Մեթոդների դասակարգումը

Ընդունելի է մեթոդների այն դասակարգումը, որը հաշվի է առնում սովորողների գիտելիքների աղբյուրը և նրանց գործունեության բնույթը։ Այդ դասակարգմամբ ընդհանուր դիդակտիկայում մեթոդները բաժանվում են 4 հիմնական խմբի։ Այս դասակարգումը առաջարկել է Վագինը, իսկ կատարելագործել՝ Գորան։

Առաջինը ***խոսքային մեթոդն է,*** որի մեջ մտնում են բանավոր շարադրանքի մեթոդը՝ իր տեսակներով և տարատեսակներով. զրույցի մեթոդը, տպագրված նյութերի, գրքերի և դասագրքերի վրա տարվող աշխատանքի մեթոդը։ Խոսքը հաղորդակցվելու հնագույն միջոց է։ Սոցիոլոգ Վիլբուր Շրամմը հաշվել է, որ 500 000 տարի պահանջվեց մարդուց բանավոր խոսքից գրավորին անցնելու համար, 5 հազար՝ ձեռագրից՝ տպագիր դազգահին և 500 տարի տպագրական դազգահից՝ հեռուստատեսությանը։

Խոսքը բնորոշ է և բանավոր խոսքին և գրավոր տեքստերին։ Ուստի ուսուցման այդ միջոցը բաժանվում է բանավոր և տպագիր–խոսքայինի։

Երկրորդը ***զննականությունն*** է՝ դրանք բոլոր տեսակի դիտումները,

ցուցադրումները, էքսկուրսիաներն են։

Երրորդը ***գործնական աշխատանքի մեթոդն է,*** երբ տրվում են տարբեր տիպի գրավոր աշխատանքներ, տրամագրեր, գրաֆիկական աշխատանքներ, վարժություններ և այլն։

Չորրորդը ***սովորողների ինքնուրույն աշխատանքի մեթոդն է.*** ինքնուրույն աշխատանք դասարանում, արտադասարանական աշխատանքի ժամանակ, տանը՝ դասագրքով, սկզբնաղբյուրներով, ուսումնական պիտույքներով աշխատելիս և այլն։

Այս չորս խումբ մեթոդները կիրառելիս պետք է հաշվի առնել պատմության դասավանդման առանձնահատկությունները և պարզել, թե դրանք որքանով են համապատասխանում նրա ուսուցման խնդիրներին։ Օրինակ՝ եթե ուսուցիչը կազմակերպում է պատմական փաստաթղթերի կամ վավերագրական նյութերի վրա աշխատանք, որը ենթադրում է սովորողի ինքնուրույնություն, նպատակահարմար է կիրառել զրույցի մեթոդը։ Մի այլ դեպքում, ասենք, եթե սովորողներին հանձնարարվում է դասագրքում զետեղված նկարի բովանդակության վերլուծություն, պետք է դիմել զննականությանը։ Իբրև տնային ինքնուրույն աշխատանք՝ կարելի է հանձնարարել նկարի կամ պատմական նյութի շուրջ գրել շարադրություն։

Եթե անհրաժեշտ է դպրոցականներին ծանոթացնել նախնադարյան աշխատանքային գործիքներին (քար), ուսուցիչը դասարան է բերում դրանք, գրատախտակի վրա անում զանազան գծագրեր, այս դեպքում նա դարձյալ դիմում է զննականությանը։ Իսկ եթե պետք է ծանոթացնել որևէ ապստամբության ընթացքին, ուսուցիչը դիմում է խոսքային մեթոդին՝ վառ, պատկերավոր պատմելուն և պատմական փաստերի հիման վրա դպրոցականներին մղում է ինքնուրույն եզրահանգումների՝ օգտագործելով ամրապնդող զրույցի մեթոդը։

գ) Ուսուցման եղանակները որպես գործունեության ձև

Մեթոդների ընտրության ժամանակ միշտ պետք է հաշվի առնել սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, գիտելիքների մակարդակը։ Այսպես, եթե ցածր դասարանում (7–րդ)

ուսուցչի շարադրանքը չի կարող երկար տևել (10–15 րոպե), ապա բարձր դասարաններում (10–12–րդ) դրան կարելի է մի ամբողջ ժամ տրամադրել։

Պատմության ուսուցման խոսքային մեթոդում իր ծանրակշիռ տեղն ունի բանավոր շարադրանքը՝ ուսուցչի պատմելը, որը երբեմն բարձր դասարաններում ստանում է դպրոցական դասախոսության բնույթ։ Բանավոր շարադրանքն ունի մի շարք տարատեսակներ՝ բացատրություն կամ պարզաբանում, վերլուծություն, պատմողական–նկարագրական, համառոտ, բնութագրական, դատողական, հուզական պատմելը և այլն։ Խոսքային մեթոդների շարքում մեծ է զրույցի մեթոդի դերը։ Չէ որ զրույցի միջոցով աշակերտները մասնակից են դառնում ուսումնասիրվող փաստերի և երևույթների վերլուծությանը։ Խոսքային մեթոդների շարքում մեծ է զրույցի մեթոդի դերը։ Չէ որ զրույցի միջոցով աշակերտները մասնակից են դառնում ուսումնասիրվող փաստերի և երևույթների վերլուծությանը։

Մեծ է հատկապես էվրիստիկական զրույցի կիրառման նշանակությունը սովորողների մտածողական ունակությունների զարգացման գործում։ Այն սովորողների առջև դնում է “ինչո՞ւ”, “ինչպե՞ս” հարցերը և նպաստում է ինքնուրույն մտածողության զարգացմանը։

Ընդհանրապես, զրույցի մեթոդը ունի այն առավելությունը, որ կիրառվում է բոլոր դասարաններում, դասի բոլոր փուլերում, ինչպես հարցում–կրկնության, այնպես էլ ստուգման և ամփոփման ժամանակ։

Պատմություն առարկայի ուսուցման ընթացքում հոգեբանական հնարների ճիշտ կիրառումը վարժեցնում է սովորողների հիշողությունն ու երևակայությունը, շարժում նրանց հետաքրքրությունները, հարստացնում դպրոցականների միտքն ու խոսքը։

Հոգեբանական հնարների օգնությամբ զարգանում են դպրոցականների հոգեկան գործընթացները՝ զգայությունները, ըմբռնումը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքներն ու կամքը։

դ) Հնարների բազմազանությունը

Մեթոդի բաղկացուցիչ մասն են հանդիսանում հնարները։

Հնարը մեթոդի տարրն է կամ նրա մասնակի դրսևորումը։ Հնար

ասելով հասկանում ենք առարկաների հետ գործողությունը, ինչպես նաև խոսքային կամ գրավոր–գծագրային գործողությունները։ Հնարը կարելի է տեսնել կամ լսել։ Այսպիսով՝ մեթոդական հնարները կոնկ- րետ խնդրի լուծմանն ուղղված գործողություններ են։ Ուսուցման ժա- մանակ մեթոդը կարող է ունենալ բազմազան կիրառական հնարներ։ Օրինակ՝ պատմելու մեթոդի ժամանակ կարող ենք կիրառել գրա- տախտակն օգտագործելու, նկարներ ցուցադրելու հնարները։ Հնա- րավոր է, որ միևնույն հնարը հանդես գա տարբեր մեթոդներ կիրառե- լիս։ Բացի այդ, դասավանդելիս հնարը կարող է հանդես գալ որպես մեթոդ։ Օրինակ՝ կինոդասերի ժամանակ ցուցադրումը դառնում է մե- թոդ, իսկ պատմելը՝ հնար։

2.2. Դասավանդման համար առաջարկվող մեթոդներ, հնարներ և վարժություններ

Ուսուցչի աշխատանքը արդյունավետ կազմակերպելու նպատա- կով ձեռնարկի մեջ յուրաքանչյուր բաժնին վերաբերող “Մեթոդական խորհուրդներ” մասում տրված են համապատասխան խորհուրդներ և ցուցումներ, ներկայացված են վարժությունների կատարման տարբե- րակներ։

1. Առաջարկվում է յուրաքանչյուր պարագրաֆ (դաս) ուսուցանելիս դասաժամը բաժանել 3 փուլերի՝ խթանում, իմաստի ընկալում և կշռա- դատում։

Առաջին փուլ – խթանման նպատակն է՝

ա) ակտիվացնել աշակերտների հիշողությունը, պարզել թեմայի մա- սին նրանց ունեցած գիտելիքները,

բ) շահագրգռել և բարձրացնել յուրաքանչյուր աշակերտի ակտիվու- թյունը՝ մասնակցությունը դասապրոցեսին,

գ) ամրապնդել նոր դասանյութի նկատմամբ յուրաքանչյուր աշակեր- տի հետաքրքրությունը և խթանել ավելին իմանալու նրա ձգտումը։

Երկրորդ փուլ – նոր դասանյութի հաղորդումն է: Իմաստի ընկալման փուլում կարևոր է պահպանել աշակերտների հետաքրքրվածությունը՝ ճիշտ ընտրելով մեթոդը (բանավոր խոսք, ընթերցանություն, խմբային և անհատական աշխատանք և այլն): Մյուս կարևոր խնդիրն է օգնել յուրաքանչյուր աշակերտի վերահսկելու նոր նյութի սեփական ընկալումը:

Երրորդ փուլ – կշռադատման փուլում աշակերտը հանրագումարի է բերում նոր տեղեկատվությունը և գործնականորեն յուրացնում՝ սեփականացնում է նոր դասանյութը:

Յուրաքանչյուր փուլի համար կան համապատասխան հարցեր և առաջադրանքներ, որոնց վերաբերյալ պարզաբանումներ կտրվեն "Մեթոդական խորհուրդներ" բաժնում:

2. Դասի սկզբում ուսուցիչը զրույցի միջոցով վերականգնում է աշակերտների սովորածը "Հայրենագիտության" V դասարանի ուսումնական նյութից: Երբ աշակերտների ուշադրությունը արդեն կենտրոնացած է, և նրանք պատրաստ են ակտիվորեն մասնակցելու դասին, ուսուցիչը սկսում է հաղորդել նոր դասանյութը՝ ներկայացնելով դասի թեմայի հանգուցային դրվագները:

Նոր նյութը ամրապնդելու և սովորողների վերլուծական մտածողությունը զարգացնելու համար ուսուցիչը անդրադառնում է դասի մեթոդական ապարատին: Այն ընդգրկում է մտապահման, տրամաբանելու, պատճառահետևանքային կապերը վերհանելու, սեփական կարծիքը փաստարկելու և քննարկման հարցեր ու առաջադրանքներ:

3. Պատմական գործիչների, դեմքերի և կարևոր իրադարձությունների վերաբերյալ ուսումնական նյութը ամրապնդելու, ամփոփելու համար առաջարկվում է կիրառել "Հնգյակ" վարժությունը: Այս վարժության բովանդակությունը հետևյալն է. աշակերտները խմբերով կամ անհատապես պետք է գրեն, օրինակ, Ալեքսանդր Մակեդոնացուն բնութագրող 5 տողանոց բանաստեղծություն: Առաջին տողում օգտագործվում է նրան վերաբերող մեկ գոյական, երկրորդ տողում՝ նրան բնութագրող երկու ածական, երրորդ տողում՝ նրան բնութագրող երեք մակբայ, չորրորդում՝ նրա գործունեությանը բնորոշ չորս բայ և հինգերորդում օգտագործվում է առաջին տողի գոյականի հոմանիշը:

Խմբային աշխատանքի դեպքում յուրաքանչյուր խումբ ներկայաց-

նում է իր գրած բանաստեղծությունը: Անհատական աշխատանքի դեպքում ուսուցիչը առաջարկում է 3–4 աշակերտի, ըստ ցանկության, ընթերցել իրենց գրածը, իսկ մյուսների գրածը փակցվում է գրատախտակին (կամ որևէ այլ տեղ), որպեսզի բոլորը ծանոթանան: Լավագույն աշխատանքները խրախուսվում են և գնահատվում:

4. Դասի կշռադատման փուլի համար խորհուրդ է տրվում կատարել "Խաթարված հերթականություն" վարժությունը, որը կնպաստի աշակերտների գիտելիքների և կարողությունների զարգացմանը: Այս վարժությունը կատարելու համար ուսուցիչը պետք է նախօրոք պատրաստվի: Առանձին թղթերի վրա գրվում են տեքստից ընտրված կարևոր անուններ, փաստեր, իրադարձություններ: Դրանք խառը հերթականությամբ փակցվում են գրատախտակին: Այնուհետև ուսուցիչը դասարանից պահանջում է այդ թղթերը դասավորել ըստ ժամանակագրական հերթականության:

5. Խթանման փուլում աշակերտներին ակտիվացնելու և նրանց նախկինում ստացած գիտելիքները վերհանելու համար առաջարկվում է կատարել "Պրիզմա" վարժությունը (5–7 րոպե):

Պրիզման ևս մտածողության ընթացքը պատկերավոր, շոշափելի դարձնելու պարզ ձև է: Նրա հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության, երևույթի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզման ապահովում է ինչպես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը: Պրիզման կարելի է կիրառել նաև նյութի ամփոփման փուլում:

"Պրիզմա" վարժությունը կատարելու համար անհրաժեշտ է.

ա. տալ մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, ինչը ենթակա է ուսումնասիրության,

բ. ճյուղավորել մեկնաբառը, գրանցել մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը,

գ. ճյուղավորել գրանցված երկու բառերից յուրաքանչյուրը նույն սկզբունքով: (Այս ընթացքը կարելի շարունակել, սակայն առավել արդյունավետ է երեք կամ չորս շերտով բացված պրիզման),

դ. սկսել պրիզման փակելու գործընթացը: Այս անգամ վանդակները

լրացվում են՝ նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի առնելով: Պրիզման եզրափակվում է վերջնաբառով,

ե. պրիզմայի ամփոփիչ քայլը Փենյարկոն ու վերջնաբառի միջև տրամաբանական կապի բացահայտումն է, որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կամ մտքի մեջ: Կարելի է նաև բացահայտել կապը պրիզմայի բոլոր բառերի միջև շարադրության միջոցով: Վերջիններիս կարելի է անդրադառնալ նյութի ամփոփման ժամանակ և ծավալել հանգամանալից քննարկում: Փաստորեն, եթե պրիզմայի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը, ապա վերջին քայլում ակտիվանում է գիտակցական ոլորտը:



“Պրիզմա” վարժության ուրվապատկերը

6. Նոր դասանյութը ամրապնդելու համար առաջարկվում է կատարել “Քառաբաժան” վարժությունը։

Այս մեթոդական հնարը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս։ Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է գրատախտակի կամ թղթի մակերեսը բաժանել 4 մասի՝ այդ մասերից յուրաքանչյուրում մտքերը համապատասխանաբար գրառելու համար։

1. Ի՞նչ էիք տեսնում տեքստը կարդալիս։ *զգայություններ.* • տեսողական • լսողական • զգացողական	2. Ի՞նչ էիք զգում տեքստը կարդալիս։ *վերաբերմունք.* • հույզեր • զգացմունքներ
3. Կապը իրական կյանքի հետ • ասոցիացիաներ • առնչություններ • օրինակներ	4. Նոր վերնագիր և պատկերանշան (լոգո) • ընդհանրացում • վերաիմաստավորում • գնահատում

“Քառաբաժան” վարժության ուրվապատկերը

Կարելի է զարգացնել հարցերը՝ նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները, տարիքային առանձնահատկությունները։

Յուրաքանչյուր հատվածում հարցի պատասխանը լրացնելուց հետո ուսուցիչը կազմակերպում է քննարկում և առաջարկում է աշակերտներին մեկնաբանել կամ հիմնավորել իրենց պատասխանները։

7. Դասը կարելի է սկսել որևէ առանցքային բառի շուրջ ուղեղային գրոհ կազմակերպելով։ Ուսուցիչը պարզում է, թե ինչ գիտեն աշակերտները որևէ բառի/հասկացության հետ կապված։

8. Երբ աշակերտներն արդեն պատրաստ են ընկալելու նոր նյութը, սկսվում է դասի երկրորդ փուլը։ Այստեղ կարելի է կիրառել “Փոխադարձ ուսուցման” մեթոդը։ Սա զույգերով կատարվող աշխատանքի ձև է։ Յուրաքանչյուր զույգի մեկ անդամին հանձնարարվում է ընթերցել առաջին ենթավերնագիրը, մյուսին՝ երկրորդը։ Ընթերցելու ժամանակ նրանք

հարցեր են պատրաստում տվյալ հատվածի վերաբերյալ։ Հատկացված ժամանակի լրանալուն պես առաջին ենթավերնագիրը ընթերցած աշակերտը իր սովորածն ուսուցանում է ընկերոջը։ Նա հարցեր է տալիս, որպեսզի պարզի, թե որքանով է նա յուրացրել իր ասածը։ Ապա նույնը անում է երկրորդ ենթավերնագիրն ուսումնասիրած աշակերտը։

9. Երկրորդ փուլում կարելի է կիրառել “Ուղղորդված ընթերցանություն” մեթոդը։ Ուսուցիչը հանձնարարում է որևէ աշակերտի ընթերցել դասանյութը մինչև առաջին ենթավերնագիրը, ապա հարցեր է տալիս, որպեսզի պարզի, թե որքանով են աշակերտները յուրացրել այդ հատվածը։ Այս եղանակով ուսուցանվում են նաև հաջորդ հատվածները։

10. Նոր նյութը ամրապնդելու համար առաջարկվում է կիրառել “Կմախք” գրավոր վարժությունը։ Այս վարժությունը կատարվում է հետևյալ քայլերով.

ա. Տեքստից դուրս գրել կամ կազմել մեկ նախադասություն, որը կարտահայտի թեմայի գլխավոր իմաստը։

բ. Դուրս գրել կամ ձևակերպել մեկ բառակապակցություն, որը կարտահայտի թեմայի առանցքային գաղափարը։

գ. Մեկ բառով արտահայտել թեմայի հիմնական բովանդակությունը։

դ. Այնուհետև սովորողները իրենց տետրում (թղթի վրա) գրում են “Ի՞նչ գույնի է տեքստը” հարցի պատասխանը։

ե. Սովորողները նկարում են թեման խորհրդանշող որևէ պատկեր։

զ. Լրացնել միտքը. “Այս թեմայից ինձ համար ամենակարևորն այն էր, որ …”։

11. Մինչև նոր դասանյութը հաղորդելը, համապատասխան թեմաների դեպքում, անհրաժեշտություն է առաջանում կապ ստեղծել նախորդ դասից և “Հայոց պատմությունից” աշակերտների ձեռք բերած գիտելիքների միջև։ Առաջարկվում է 5 րոպե տրամադրել “Ի՞նչ եք հիշում ….” հարցի պատասխանը գրելու համար։ Ապա սկսվում է նոր նյութի հաղորդումը։

12. Կարևոր մանկավարժական պահանջ է նաև պահպանել սովորողների հետաքրքրությունը առարկայի, թեմայի հանդեպ՝ ճիշտ ընտրելով մեթոդը։ Խորհուրդ է տրվում կիրառել “Կրկնակի գրառումների օրագիր” մեթոդը։ Այս մեթոդով կատարվող աշխատանքը անհատական է և կազ-

մակերպվում է այսպես.

տետրի էջը բաժանվում է երկու ուղղահայաց սյունակների։ Ձախ կողմում գրվում է տեքստից ընտրված, աշակերտի կարծիքով, առավել ուշագրավ հատվածները, իսկ աջ կողմում՝ այդ հատվածների վերաբերյալ աշակերտի մեկնաբանությունը (պատկերացում, համեմատություն, համադրում կամ եզրակացություն)։ Այնուհետև ուսուցիչը անցկացնում է հարցում և մտքերի փոխանակում։

13. “Փոխգործուն նշանների համակարգ” մեթոդի կիրառման ժամանակ սովորողներին հանձնարարվում է դասը ընթերցել՝ նշումներ կատարելով.

“V” – այս նշանը դրեք լուսանցքում այն հատվածի կողքին, որը հաստատում է ձեր իմացածը,

“–” – այս նշանը դրեք լուսանցքում այն հատվածի կողքին, որը հակասում է ձեր իմացածին,

“+” – այս նշանը դրեք լուսանցքում այն հատվածի կողքին, որը ձեզ համար նորություն է պարունակում,

“°” – այս նշանը դրեք լուսանցքում այն հատվածի կողքին, որի տեղեկատվությունը ձեզ հասկանալի չէ, որի մասին ավելին կուզենայիք իմանալ։

Այնուհետև նշված հատվածները լրացվում են տրված աղյուսակի համապատասխան սյունակներում, որից հետո անց է կացվում քննարկում։

“V”	“-”	“+”	“°”

Փոխգործուն նշանների համակարգ

14. Սովորողների քննական մտածողությունը զարգացնելու, երկխոսություններին ու քննարկումներին մասնակցելու, սեփական կարծիքը հիմնավորելու և պաշտպանելու կարողություններն ամրապնդելու նպատակով առաջարկվում է կազմակերպել քննարկում դասի վերջում տրված հարցի շուրջ: Խորհուրդ է տրվում այն կատարել խմբերով, ապա յուրաքանչյուր խմբի կարծիքը ներկայացնել դասարանին: Քննարկման հարցի պատասխանը ավելի ամբողջական դարձնելու համար կարելի է օգտագործել լրացուցիչ նյութեր:

15. Կրկնության դասին խորհուրդ է տրվում գրավոր կամ բանավոր ստուգմամբ (հարցեր, վարժություններ, թեստեր և այլն) ամփոփել անցած բաժիններից աշակերտների ստացած գիտելիքները, ամրապնդել նրանց կարողություններն ու հմտությունները:

Պատմության ուսուցման արդյունավետության բարձրացման պայմաններից է ուսուցչի կողմից բազմաթիվ մեթոդների կիրառումը և համադրումը: Այս տեսանկյունից արդյունավետ են պարզ, կազմակերպական մեծ նախապատրաստություն, միջոցներ ու նյութեր չպահանջող մեթոդական հնարները, որոնցից շատերը կարելի է կիրառել առարկայի դասավանդման տարբեր փուլերում:

Խմբավորում

Խմբավորումն այն մեթոդական հնարներից է, որը կարելի է օգտագործել դասի թե ներածական, թե ամփոփման փուլերում: Այն օգնում է երեխաներին ազատ, անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ, մեծ ծավալով մտքեր, գաղափարներ կուտակել, այնուհետև մտածել ու բացահայտել այդ գաղափարների միջև գոյություն ունեցող կապերը:

Խմբավորում կատարելու համար անհրաժեշտ է.

1. գրատախտակի կամ թղթի կենտրոնում գրել ուսումնասիրվող թեման կամ նրա հետ առնչվող բանալի բառը,

2. առաջարկել աշակերտներին ասել գաղափարներ, բառեր և արտահայտություններ, որոնք առնչվում են բանալի բառի հետ,

3. բանալի բառի շուրջ գրանցել աշակերտների արտահայտած բոլոր գաղափարները, բառերն ու արտահայտությունները՝ չդատելով դրանց

ճիշտ ու սխալ լինելու մասին,

4. բացահայտել գրված գաղափարների, բառերի ու արտահայտությունների միջև կապը և գծերով միացնել իրար։

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ. Կուտակված տեղեկատվությունը քննարկելուց հետո անհրաժեշտություն է առաջանում այն դասակարգելու և տեղաբաշխելու հետագայում ավելի նպատակային գործածելու հա- մար։ Հասկացությունների համեմատման, համակարգման միջոց է հասկացությունների աղյուսակը։ Այն հատկապես օգտակար է, երբ համեմատ- վում են երեք կամ ավելի հասկացություններ։ Աղյուսակը կազմվում է հա- մեմատվող հասկացություններից յուրաքանչյուրին մեկ տող, իսկ դրանց համեմատման հատկանիշներին մեկական սյունակ տրամադրելու միջո- ցով։ Սյունակների քանակը պայմանավորված է այն հանգամանքով, թե հասկացություններն ինչ խորությամբ և ծավալով են համեմատվում։

T–աձև ԱՂՅՈՒՍԱԿ. T–աձև աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար։ Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանց- վում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը։ Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննար- կումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձա- գանքների գրառման համար։

m–աձև ԱՂՅՈՒՍԱԿ. m–աձև աղյուսակը արդյունավետ է դասի տարբեր փուլերում խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք արտահայտելու, գրանցելու և դրա հիման վրա քննարկում կազմակեր- պելու համար։ Այն բաղկացած է երեք բաժնից, յուրաքանչյուր բաժնում գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ իրենց տեսակետները հիմնավորելու համար։

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ (մտքերի քարտեզագրում). “Քարտեզը” սկսում են կազմել հետևյալ կերպ։ Նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը, որի շուրջ գրի են առնվում ուղեկից հասկացությունները, մտքերն ու գաղափարները։ Քարտեզի “ճյուղերը” տարածվում են նաև ուղեկից բառից դուրս բխելով։ Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրման խորությունից, հետաքրքրությունների շրջանակից։ Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է “ծնող” բառի հետ, իսկ միևնույն “ծնողն” ունեցող բառերը վերցվում են մի շրջանի մեջ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ։

ՏՐԱՄԱԳԻՐ (դիագրամ)։ Տրամագիրը կարելի է օգտագործել գաղափարները, պատմական երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով՝ նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ։ Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են գաղափարների, երևույթների, անձերի ընդհանրությունները, իսկ չհատվող մասերում առանձնացվում և շեշտվում են նրանց առանձնահատկությունները։ Տրամագիրը կարող է այլ գծապատկերներով հանդես գալ, եթե մտքերի գրառման համար նախատեսված տարածքները չեն բավարարում։ Բացի այդ այն կարող է ունենալ նաև բարդ կառուցվածք՝ երեք–չորս հասկացությունների համեմատության համար։

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուսուցման գործընթացում՝ կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում,
- լուսաբանում,
- մոդելների, քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում,
- էքսկուրսիաների անցկացում,
- նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում,
- ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում,
- գործնական աշխատանքների կատարում,
- հետազոտական և նախագծային աշխատանքների կատարում,
- ստեղծագործական աշխատանքների կատարում,
- տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում, խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում,
- իրավիճակների և արդյունքների վերլուծում,
- հաշվետվությունների պատրաստում,
- գրավոր աշխատանքների կատարում, հաղորդում,
- բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքների անցկացում,
- նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում,
- անհատական, խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում։

4. ՈՒՈՒՑՉԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ԴԱՍԻՆ

Միայն այն ուսուցիչը կարող է դառնալ իր գործի իսկական վարպետ, ով լավ կուսումնասիրի, թե ինչ՞ պետք է իմանան աշակերտները և ինչ՞ ճանապարհով հասնեն այդ գիտելիքներին:

Վ.Ի. Սուխոմլինսկի

ԴԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Դասի բովանդակության և մանկավարժական մտահաղացման լիարժեքություն
- Դասի համապատասխանությունը դրված նպատակին
- Գիտելիքների գիտականություն
- Գիտելիքների բազմազան աղբյուրների կիրառում
- Հիմնական գիտելիքների ձևավորման համար կարևորի ընտրություն
- Ուսուցման շահագրգռություն /մոտիվացիա/ և անհատականացում
- Սովորողների ինքնուրույն մտագործունեության բարձր աստիճան և նրանց ճանաչողական ակտիվություն
- Բոլոր սովորողների ներգրավում
- Դասի տիպի, միջոցների և մեթոդների ճիշտ ընտրություն
- Ուսուցչի և սովորողների գործողությունների միասնականություն

ԴԱՍԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ

Ուսուցչի կողմից դասին նախապատրաստվելը սկսվում է ուսումնական տարվա սկզբից առաջ: Այն սկսվում է հանրակրթության պետական չափորոշչին, առարկայի չափորոշչին և ծրագրին ծանոթանալուց: Միայն այդ դեպքում ուսուցիչը կարող է

ունենալ ոչ թե առանձին դասեր, այլ տվյալ դասարանի ամբողջ ուստարվա համար դասերի համակարգ: Այնուհետև ուսուցիչը ծանոթանում է դասագրքերին՝ դրանց կառուցվածքին, բովանդակությանը, մեթոդական ապարատին:

Չափորոշիչների, ծրագրերի և դասագրքերի հետ ծանոթությունը թույլ է տալիս կանխորոշել բաժինների և ամբողջ նյութի ուսումնա-դաստիարակչական նպատակները:

Միայն դրանից հետո կարելի է կազմել առարկայի թեմատիկ պլանավորում: Այդ ընթացքում ուսուցիչը պետք է առանձնացնի թեմաներ, որոնց բովանդակության հստակեցումը պահանջում է իր ներդրումը, և՛ թեմաներ, որոնք մատչելի են սովորողների ինքնուրույն ուսումնասիրման համար: Հաշվի առնելով այս ամենը, ինչպես նաև իմանալով յուրաքանչյուր դասարանի ճանաչողական կարողությունները, ուսուցիչը կարող է կազմել առանձին դասերի պլաններ:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի պլանը անհրաժեշտ է յուրաքանչյուր ուսուցչին, անկախ նրա զարգացման աստիճանից և աշխատանքային փորձից, քանի որ դասի պլան գրելու ընթացքում ուսուցիչը իրականացնում է ապագա դասի կանխատեսումը, պատրաստում է դրա սցենարը: Յուրաքանչյուր դաս առանձին ստեղծագործական գործընթաց է: Դասի գլխավոր գործառույթը սովորողի անձի ձևավորումն ու զարգացումն է:

Դասի պլանավորումը անհրաժեշտ է մտահղացումների իրագործման արդյունավետության համար: Դասի պլան կազմելիս պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնել այն նպատակին, որին պատրաստվում են հասնել:

Դասի նպատակը ներառում է հնարավոր արդյունքների կանխատեսում և ուսուցչի ու սովորողների գործողությունների ծրագիր, որը ուղղված է ցանկալի արդյունքին հասնելուն: Մարկ Տվենն ասում էր. «Ով չգիտի, թե՞ ուր է գնում, շատ կզարմանա, որ ճիշտ տեղ չի հասել»:

ԴԱՍԻ ՊԼԱՆ ԳՐԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Ճանաչե՛ք ձեր սովորողներին: Ուղղե՛ք ձեր պլանը սովորողների ամբողջ խմբին և միայն դրանից հետո մտցրեք անհրաժեշտ փոփոխություններ, հաշվի առնելով ներառական, չառաջադիմող և գերակտիվ սովորողներին:
- Իմացե՛ք ձեր նպատակները, ի՞նչ են ուզում սովորել ձեր աշակերտները: Դուք ի՞նչ եք ուզում, որ նրանք իմանան պարապմունքի վերջում:
- Պլանավորե՛ք պարապմունքը մանրամասնորեն, պլանի մեջ մտցրեք թե ինչպես եք գրավելու սովորողների ուշադրությունը: Պատրաստ եղե՛ք մի քանի քայլ հետ գնալու, որպեսզի չհասցնողները հետ չընկնեն մյուսներից:
- Մանրամասնորեն պլանավորե՛ք ձեր ժամանակը:
- Դասի ավարտից հետո վերանայեք ձեր պլանը, վերլուծեք թե ինպես անցավ դասը: Միշտ պետք է պլանավորել ավելի շատ, քան պետք կլինի, այն դեպքի համար, եթե որևէ մաս ավելի արագ կանցնի, քան կարծում էիք:
- Պլանավորեք գնահատումը: Գնահատելով դուք ճշտում եք, թե ինչպես են սովորողները հասկացել նյութը:
- Տվեք տնային առաջադրանք

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

1. պատրաստ եղեք շեղվել ձեր դասի պլանից, պլանավորեք ինչպես վերադարձնել դասարանի ուշադրությունը:
2. Լավ ուսումնասիրեք դասավանդվող նյութը /տիրապետեք դրան/:
3. Մի մոռացեք դասավանդվող նյութը համապատասխանեցնել պետական և առարկայական չափորոշիչներին և առարկայական ծրագրին:

ԴԱՍԻ ՊԼԱՆ ԳՐԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- ✓ Դասի համարը
- ✓ Դասի թեման / այն գրվում է համաձայն ծրագրի և ձեր կազմած թեմատիկ պլանավորման/
- ✓ Դասի նպատակը /կրթական, զարգացնող և դաստիարակչական/

ա/ **Կրթական/ կիմանա**

- **Գիտելիք** /հասկացություններ, երևույթներ, եզրեր, չափի միավորներ, բանաձևեր, կանոններ և այլն/
- **Կարողություններ** /խնդիրների լուծում, չափումներ, բանավոր և գրավոր խոսքի զարգացում, դասագրքի, լրացուցիչ նյութերի, քարտեզների, ուսումնական նկարների հետ աշխատանքներ, համեմատություններ, ապացույցներ, խմբային աշխատանքի կարողություններ:
- **Հմտություն** - դա ավտոմատիզմի աստիճանի հասցրած կարողությունն է:

բ/ **Զարգացնող/ կկարողանա**

- խոսքի, մտածողության զարգացում, զգայարանների միջոցով արտաքին աշխարհի ընկալում, զգացմունքներ,
- Մտագործունեություն. վերլություն, համադրում, դասակարգում, դիտարկումներ կատարելու կարողություն, եզրահանգումներ, կարևորը երկրորդականից տարբերելու կարողություն, հիպոթեզների կամ վարկածների առաջադրում և այլն:

գ/ **Դաստիարակչական /վերաբերմունք**

- Բարոյական և գեղագիտական պատկերացումներ, վարքագծի կանոններին հետևելու կարողություն:

- Անհատի պահանջմունքներ, դիրքորոշում, արժեքներ և գնահատում, աշխարհայացք:

- ✓ ***Դասի տիպը*** - մեթոդիկայի բնագավառում շարունակվում են դասի տիպերը դասակարգելու վերաբերյալ վեճերը: Մենք կարող ենք ընդունել հետևյալ առավել տարածված դասակարգումը. Ներածական դաս, նոր նյութի հաղորդման դաս, համակցված կամ խառը դաս, գիտելիքների ստուգման և հաշվառման դաս, ամփոփման դաս և այլն: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ դասի տիպերը հիմնականում «մաքուր» չեն կիրառվում:
- ✓ ***Մեթոդներ, մեթոդական հնարներ*** - տեխնոլոգիան հունարեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի, վարպետության մասին:
- ✓ ***Մանկավարժական տեխնոլոգիա*** - այս հասկացությունը ուսուցման և դաստիարակության ոլորտում կիրառվող աշխատանքի ձևերի ամբողջությունն է: Մանկավարժական տեխնոլոգիան դասավանդողի գործողությունների հաջորդական համակարգ է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է:
- ✓ *Դասի ընթացքը՝*
    - Կազմակերպչական մաս
    - Խթանում /ներածություն/
    - Իմաստի ընկալում /հիմնական մաս, նյութի հաղորդում/
    - Կշռադատում
    - Անդրադարձ /ամփոփում/
    - Գնահատում
    - Տնային առաջադրանք

- ✓ ***Ուսումնական նյութեր*** - դասագրքեր, քարտեզներ, պաստառներ, ուսումնական նկարներ, համակարգիչ, պրոյեկտոր և այլն:
- ✓ ***Միջառարկայական, ներառարկայական կապեր***
- ✓ ***Ակնկալվող վերջնարդյունքներ:***

Դասի փուլ	Ուսուցչի գործողություն	Սովորողների գործողություն	Ձևական պարագաներ	Ակնկալվող արդյունքներ

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7–րդ դասարան (68 ժամ)

1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՌԱՆՁԻՆ ԴԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

1.1. 7-րդ դասարանի դասագրքի բովանդակության մշակման հիմքում դրված հայեցակարգը

Պատմության ուսուցումը հանրակրթական դպրոցում հարուստ ավանդույթներ ունի: Բովանդակության մշակման համար հայեցակարգային նշանակություն են ունեցել հետևյալ սկզբունքները.

1. Հայեցակարգի հիմքում դրված է առարկայի գիտամեթոդական դասավանդման դրական փորձը:
2. Համաշխարհային պատմության հանրակրթական նշանակության գիտակցումը ևս անհրաժեշտ պայման է. պատմությունը մի գիտություն է, որը միշտ ունեցել է և ունի հասարակական բազմաշերտ սպառում:
3. Պատմությունն աշխարհայացք ձևավորող գիտություն է, որի ուսուցումը հաշվի է առնված առարկայի բովանդակության ձևավորման գործում:
4. Պատմագիտությունը, որպես հասարակական մշտական արձագանքներով բնորոշվող գիտություն, անընդմեջ զարգացման գործընթացում է:
5. Արդի աշխարհում պատմության բովանդակության հիմնախնդիրը ձեռք է բերել միջազգային նշանակություն, առանձին դեպքերում դարձել միջպետական հարաբերությունների քննարկման առարկա:

Դպրոցում պատմական կրթության համար առաջնային են համարվում հետևյալ խնդիրները.

– սովորողներին տեղեկություններ տալ մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունների, երևույթների, գործընթացների, գաղափարների, հասկացությունների վերաբերյալ՝ ըստ հասարակության կենսագործունեության հիմնական չորս ուղղությունների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր–մշակութային.
– սովորողների մեջ զարգացնել ընդհանուր ուսումնական և պատմության ուսումնասիրությանն ուղղված առանձին կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ կլինեն պատմությունից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման համար.
– նպաստել սովորողի՝ անհրաժեշտ սոցիալական որակներ ունեցող անձի կայացմանը, ով գիտակցում է հիմնարար արժեքների առաջնայնությունը և ձգտում իր կրթվածության մակարդակի բարձրացմանը.
– սովորեցնել պատճառահետևանքային կապեր գտնել պատմական գործընթացներում, հասկանալ, վերլուծել և բացատրել տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման ընթացքը և առանձնահատկությունները պայմանավորող գործոնները.
- արժևորել և գնահատել հին աշխարհի և միջնադարի ընթացքում տարբեր պետությունների և ժողովուրդների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ, վերհանել ստեղծված արժեքների արդիականությունը։

1.2. ԲԱԺԻՆ Ի. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (31 ժամ)

Առաջին բաժնի դասավանդմանը հատկացվում է 31 դասաժամ: Դասագրքում այն ներկայացված է ներածությամբ, 8 պարագրաֆով և բաժնի ամփոփմամբ: Ժամաքանակի օրինակելի բաշխումը ներկայացված է ձեռնարկի վերջում տրված օրինակելի թեմատիկ պլանավորման միջոցով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (2 ժամ)

Նպատակը և խնդիրները

• Ծանոթացնել «Համաշխարհային պատմություն» առարկայի 7–րդ դասարանի ծրագրին և դասագրքի բովանդակությանը, դասագրքի կառուցվածքին և պայմանանշաններին:

• Ներկայացնել առարկայի ծրագրի ժամանակագրական շրջանը, ենթափուլերը, առանձնահատկությունները:

• Ընդհանուր պատկերացում տալ 7-րդ դասարանի ժամանակաշրջանների՝ մարդկության պատմության մեջ ունեցած դերի և նշանակության մասին:

Մեթոդական խորհուրդներ

Ներածական դասին ուսուցիչը պարզաբանում է Համաշխարհային պատմություն ուսումնասիրելու անհրաժեշտությունը: Սովորողների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ պատմության մասին նրանց գիտելիքները ժամանակագրորեն համակարգված չեն և շատ համառոտ են: Սովորողների տարիքային ընկալմանը համապատասխան՝ ներկայացվում է «Համաշխարհային պատմություն» առարկայի սահմանումը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Հնարավոր մատչելիությամբ թվարկվում են այն աղբյուրները, որոնցից տեղեկանում ենք մարդկության պատմության Հին և Միջին դարերի մասին:

Այնուհետև ուսուցիչը նորից բացատրում է «ժամանակ» հասկացությունը, և ներկայացվում են ժամանակի հաշվարկման միավորները:

Գծագրերի միջոցով բացատրվում են դար և հազարամյակ հասկացությունները։ Հատուկ ուշադրություն է դարձվում պատմական ժամանակի միասնական հաշվարկ ստեղծելու անհրաժեշտության հարցին։ Ուսուցչի առաջնահերթ խնդիրն է ամրապնդել աշակերտների մոտ “Քրիստոսից առաջ” (Ք.ա.) և “Քրիստոսից հետո” (Ք.հ.) հասկացությունների ըմբռնումը։

Այնուհետև ուսուցիչը ծանոթացնում է դասագրքի բովանդակությանը, առանձին բաժիններին, պարագրաֆներին, դասերի կառուցվածքին և մեթոդական ապարատին։

7–րդ դասարանի դասագրքի մեթոդական ապարատում ընդգրկված են ժամանակակից ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներով աշխատանք պահանջող հարցեր և առաջադրանքներ, որոնք կդյուրացնեն պատմական նյութի ընկալումը, կխթանեն աշակերտների ակտիվությունը դասաժամին, կնպաստեն նրանց քննական և վերլուծական մտածողության, ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողությունների զարգացմանը։

Ընտրված բովանդակությունը և մեթոդական ապարատը նպատակաուղղված են առարկայի չափորոշչով տրված, սովորողների պատմական գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային վերաբերմունքի ձևավորմանն ու զարգացմանը, 7-րդ դասարանի համար նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերմանը։

ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ

Պարագրաֆ 1. Հին Եգիպտոս (4 ժամ)

Դասի նպատակը և խնդիրները

- Սովորողները պատկերացում կստանան Հին Եգիպտոսի, նրա աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների մասին, կկարողանան գնահատել Համաշխարհային պատմության մեջ եգիպտական քաղաքակրթության ունեցած դերն ու ստեղծած արժեքները։

Կիմանան

- Կսովորեն և կկարողանան բացատրել նոր բառերը, տերմինները, անուններն ու հասկացությունները՝ Նեղոս, “Նեղոսի պարգև”, Մեմֆիս, Փարավոն, Թութմոս III, Ռամզես II։

Կկարողանան

- քարտեզի վրա ցույց տալ Եգիպտոսի աշխարհագրական դիրքը,փոփոխությունները տարբեր ժամանակաշրջաններում։
- բացատրել երևույթների և իրադարձությունների պատճառներն ու հետևանքները։

Վերաբերմունք

- Կձևավորվի վերաբերմունք Եգիպտական քաղաքակրթական արժեքների և համաշխարհային արժեհամագարգի վրա դրա թողած ազդեցության նկատմամբ։
- Կձևավորվեն անհատական և խմբով աշխատելու, սեփական կարծիքը արտահայտելու և խմբի աշխատանքը ներկայացնելու կարողություններ։

Դասի ընթացքը

Խթանման փուլ *(5–7 րոպե)*

Երեխաների հետ անցկացնել զրույց Եգիպտոսի մասին։ Հարցնել, թե ինչ գիտեն Եգիպտոսի մասին։ Ցո՛ւյց տալ քարտեզի վրա։

Կարելի է կատարել “Պրիզմա” կամ “Ուղեղային գրոհ” վարժությունը “Եգիպտոս” բառով։ Այնուհետև հակիրճ՝ 3–5 րոպեի ընթացքում, ներկայացնել դասի հիմնական դրույթները /ներկայացնել եզրույթներ, տեղանուններ, անձնանուններ/։

Իմաստի ընկալման փուլ *(20 րոպե)*

Առաջարկվում է կիրառել “Գրական խմբակ” մեթոդը։ Դասարանը բաժանվում է վեց խմբի՝ ըստ ենթավերնագրերի (յուրաքանչյուր ենթավերնագիր ուսումնասիրում են երկու խումբ)։ Խումբը կարող է բաղկացած լինել 3–4 հոգուց։ Խմբի յուրաքանչյուր անդամ ստանում է անհատական առաջադրանք։ Առաջին համարները պետք է կարդան իրենց ենթավերնագիրը, որպեսզի պատմեն ամբողջ խմբին։ Երկրորդ համարները կարդում, դուրս են գրում նոր հասկացությունները, անունները, տերմինները և փորձում բացատրել դրանք։ Երրորդ համարները ուսումնասիրում են ենթավերնագրին կից նկարները և դրանց բացատրությունները։ Չորրորդ համարները մտածում և նկարում են տվյալ ենթավերնագրին բնորոշ խորհրդանիշ-պատկեր (լոգո)։ Այդ աշխատանքի համար հատկացվում է 10–15 րոպե ժամանակ։ Եվս 10 րոպե հատկացվում է, որպեսզի խմբի անդամները միմյանց ներկայացնեն իրենց կատարած աշխատանքները, այնուհետև միասին դուրս գրեն իրենց եզրահանգումը, և եթե անհրաժեշտ է, լրացնեն նկար–խորհրդանիշը։

Կշռադատման փուլ *(10 րոպե)*

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կատարած աշխատանքը (նույն աշխատանքը կատարած խմբերը միասին՝ իրար լրացնելով) նոր բառերով, նկարներով, եզրահանգումով։ Մյուսները լսում են, հարցեր տալիս։ Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը միջամտում է և տալիս բացատրություններ։

Եթե ժամանակ կա, կարելի է անդրադառնալ դասագրքի մեթոդական ապարատի հարցերին, հակառակ դեպքում հանձնարարել տանը կատարել առաջադրանքները և պատրաստել հարցերի պատասխանները (բանավոր)։

Կիրառվող մեթոդներ, հնարներ

Գործնական աշխատանք, զրույց, պրիզմա կամ ուղեղային գրոհ, գրական խմբակ, այցելություն պատկերասրահ։

Միջառարկայական, ներառարկայական կապեր

Աշխարհագրություն, Հայոց պատմություն։ Հայրենագիտություն։

Օգտագործված նյութեր

Դասագիրք, տետր, թղթեր, քարտեզ, համակարգիչ, պրոեկտոր։

Դասի տիպը

Խառը կամ համակցված։

Ստորև ներկայացվում է դասի համար գործնական աշխատանքի մեթոդի կիրառման օրինակ։

Ա. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴ

(գրաֆիկներ և ուրվապատկերներ)

Հին Արևելքի խոշորագույն պետություններից, Աֆրիկայի հյուսիս–արևելքում է, որի տարածքը փռված էր Նեղոսի հովտի երկայնքով:

Գյուղատնտեսության զարգացման համար բարենպաստ պայմանները	Գյուղատնտեսության զարգացման համար անբարենպաստ պայմանները
1) բերրի հողեր 2) խոնավության առատություն 3) տարվա ընթացքում տաք արևային օրերի առատություն 4) բնական պարարտանյութ՝ գետի տիղմի ձևով	1) ճահիճների առատություն 2) անհամաչափ տեղումներ (ջրհեղեղ, երաշտ) 3) շինարարական փայտանյութի բացակայություն 4) մետաղների անբավարար քանակություն

Հողագործական տնտեսության առանձնահատկությունը
Ոռոգում՝ դաշտերը ջրելու համակարգ արհեստական ջրանցքների, ջրամբարների, ամբարտակների օգնությամբ

Պահանջում էր

Պահանջում էր

Ոռոգման համակարգերի ստեղծումը

Մեծ քանակությամբ մարդկանց կոլեկտիվ աշխատանքի կազմակերպում

Ուժեղ կենտրոնական իշխանություն

Ձևավորվեց պետության հատուկ ձև՝ բռնապետություն (հուն. դեսպոտիա՝ անսահմանափակ իշխանություն)

Հին Եգիպտոսի պատմության փուլերը	
Ք.ա. IV հազարամյակի երկրորդ կես	Նեղոսի հովտում կար ավելի քան 40 փոքր պետություն
Ք.ա. XXXI դար	Եգիպտոսի միավորումը, մայրաքաղաքը՝ Մեմֆիս
Ք.ա. II հազարամյակի կեսեր	Եգիպտոսը՝ ժամանակի ամենահզոր պետություն, մայրաքաղաքը՝ Թեբե
Ք.ա. XV դար	Եգիպտոսը նվաճեց Սիրիան, Պաղեստինը և Նուբիան
Ք.ա. 525 թ.	Եգիպտոսի նվաճումը Աքեմենյան Իրանի կողմից
Ք.ա. 332 թ–ից	Հունամակեդոնական գերիշխանություն
Ք.ա. 31 թ–ից	Եգիպտոսը՝ հռոմեական նահանգ (պրովինցիա)

Պարագրաֆ 2. Հին Միջագետք (3 դասաժամ)

Այստեղ ներկայացված են հինարևելյան քաղաքակրթության երկրորդ խոշոր կենտրոնում՝ Միջագետքում ստեղծված պետականությունները։

Հատուկ ուշադրություն է դարձվում Միջագետքի բնակլիմայական և աշխարհագրական պայմաններին, որոնցով զգալիորեն պայմանավորված էր մարդկանց կենսագործունեության եղանակը։ Ներկայացվում են Ք.ա. III հազարամյակում Միջագետքում ձևավորված վաղ պետությունները՝ շումերական քաղաք–պետությունները, Աքքադի պետությունը։

Ք.ա. II հազարամյակը Միջագետքի պետությունների հետագա հզորացման փուլն է։ Անկում ապրած պետությունների փոխարեն հանդես են գալիս Աշշուրը (հետագայում՝ Ասորեստան), Բաբելոնը, Միտաննին, որոնք սկսում են կարևոր դեր խաղալ Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում։ Այս շրջանում են դրվում Ասորեստանի աշխարհակալ տերության հիմքերը։

Ք.ա. II հազարամյակի առաջին կեսը Միջագետքի պետությունների քաղաքական և տնտեսական հիմքերի ամրապնդման շրջանն էր։ Համմուրապիի օրենսգիրքը աշակերտին մատուցելիս անհրաժեշտ է հատուկ ընդգծել դրա ստեղծման հիմնական դրդապատճառը՝ կենտրոնական իշխանության ամրապնդումը, որը հենվում էր մասնավոր սեփականության հաստատագրման վրա։

Պարագրաֆ 3. Խեթական պետությունը (1 դասաժամ)

Դասը ներկայացնում է Փոքր Ասիայի հին քաղաքակրթություններից մեկը, որ ստեղծել էին խեթերը։ Այս թեմայի ընտրությունը պայմանավորված է հայ ժողովրդի և հայոց վաղ պետականության կազմավորման գործում փոքրասիական քաղաքակրթության խաղացած կարևոր դերով։

Ք.ա. XVII դարում առաջացավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը՝ Խեթական թագավորությունը։ Նշվում են Խեթական պետության և Հայկական լեռնաշխարհի պետությունների միջև գոյություն ունեցած սերտ առնչությունները։

Պարագրաֆ 4. Հնդկաստան (1 դասաժամ)

Այստեղ ներկայացված է Հին Արևելքի քաղաքակրթական կարևոր կենտրոններից Հնդկաստանը։

Հնդկաստանի հնագույն քաղաքակրթությունը երկրի հյուսիս–արևմուտքում Ք.ա. III հազարամյակում ստեղծված Մոհենջոդարոյի և Խարապպայի մշակույթն էր։ Ք.ա. II հազարամյակի սկզբներին Հնդկաստան ներխուժեցին արիացիները, որոնք ստեղծեցին իրենց պետությունները։ Տեղի նվաճված ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու նպատակով արիացիները մտցրին բնակչության սոցիալական բաժանման համակարգ (4 կաստաներ)։ Կաստայական համակարգն այսօր էլ գոյատևում է Հնդկաստանում։

Պարագրաֆ 5. Չինաստան (1 դասաժամ)

Այս պարագրաֆում ներկայացված է համաշխարհային քաղաքակրթական կարևոր կենտրոններից Չինաստանը։

Հուանհե և Յանցզի գետերի հովիտներում Ք.ա. II հազարամյակի առաջին կեսից կազմավորված պետությունների միավորումը հանգեցրեց Ք.ա. XII դարում Չժոու պետության ստեղծմանը։

Հան կայսրության շրջանում Չինաստանը, շնորհիվ Ու Դի կայսեր նվաճողական քաղաքականության, ուղղակի կապեր հաստատեց Միջին Ասիայի, Իրանի հետ։ Հատուկ արժևորվում է շուրջ 7000 կմ երկարություն ունեցող “Մետաքսի ճանապարհի” դերը։

Պարագրաֆ 6. Աքեմենյան Իրանը (2 դասաժամ)

Իրանի տարածքում քաղաքակրթության հնագույն կենտրոնը Էլամն էր, որը Շումերի հարևանությամբ էր, և որի մշակույթը զգալիորեն ազդվեց շումերականից։ Էլամի պետությունը գոյատևեց շուրջ երկու հազարամյակ՝ լինելով շումերական պետությունների, Աքքադի, Ասորեստանի և Բաբելոնիայի ժամանակակիցը։ Էլամցիները ստեղծեցին զարգացած ինքնատիպ մշակույթ։

Իրանական բարձրավանդակի քաղաքական կյանքում արմատական փոփոխությունները սկիզբ առան Ք.ա. II հազարամյակում՝ Հայկական լեռնաշխարհից արիական ցեղերի ներգաղթի հետևանքով։ Արիացիները տարածվեցին ողջ բարձրավանդակով։

Մարական ցեղերի միավորման արդյունքում Ք.ա. 625 թ. ստեղծվեց Մարաստանի պետությունը, որի առաջին արքա դարձավ Կիաքսարը։ Ասորեստանի կործանումից հետո Մարաստանն ու Բաբելոնիան իրար մեջ բաժանեցին Առաջավոր Ասիայի մեծ մասը։

Աքեմենյան պետության հիմքը դրեց Կյուրոս Մեծը, որին հաջողվեց մոտ քսան տարում նվաճել ամբողջ Հայաստանը, Փոքր Ասիան և Միջագետքը։ Աքեմենյան Իրանի հզորացումը կապված է Դարեհ I–ի գործունեության հետ։ Աշակերտին անհրաժեշտ է բացատրել, որ զենքի ուժով ստեղծված ոչ մի պետություն չի կարող երկար գոյատևել զենքի օգնությամբ։ Ահա այս տեսանկյունից է մեկնաբանվում Դարեհ I–ի գործունեությունը, նրա վարչական և տնտեսական բարեփոխումները, որոնց նպատակն էր լայնածավալ տերության բոլոր շրջաններում մտցնել կառավարման միասնական համակարգ և դրանք տնտեսապես կապել միմյանց հետ։

Դաս 15. ԱՄՓՈՓԻՉ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա - Հին Արևելք (1 ժամ)

Այս դասին խորհուրդ է տրվում ամփոփել 1-6 պարագրաֆների ուսումնասիրման արդյունքում աշակերտների ստացած գիտելիքները, ամրապնդել նրանց կարողություններն ու հմտությունները, դիրքորոշումներն ու արժեքային վերաբերմունքը:

1. ԱՄՓՈՓԻՉ ԱՇԽԱՏԱՆՔի ՆՄՈՒՇՇՈՐԻՆԱԿ

(ընդգրկում է՝ ներածությունը, 1-6-րդ պարագրաֆները)

1. Ո՞ւմ հաղթանակով ավարտվեց Ք.ա. XVII դարում խեթական պետությունների միջև սկսված պայքարը: (0,25)

ա) Լաբարնա բ) Տելեպինուս
գ) Խաթթուսիլիս I դ) Մուրսիլիս I

2. Իրավական պետություն ստեղծելու առաջին փորձը որտե՞ղ է կատարվել: (0,25)

ա) Շումեր բ) Աքքադ
գ) Եգիպտոս դ) Բաբելոն

3. Նշված պետություններից ո՞րը Միջագետքում չէր: (0,25)

ա) Աքքադ բ) Շումեր
գ) Բաբելոն դ) Եգիպտոս

4. Ե՞րբ է ստեղծվել եգիպտական գիրը: (0,25)

ա) Ք.ա. VI հազարամյակի վերջին
բ) Ք.ա. IV հազարամյակի սկզբին
գ) Ք.ա. IV հազարամյակի վերջին
դ) Ք.ա. V հազարամյակի սկզբին

5. Ո՞րն էր Էլամ պետության մայրաքաղաքը: (0,25)

ա) Պերսեպոլիս բ) Նինվե
գ) Շուշ դ) Էքբատան

6. Փարավոն Էխնաթոնը ու՞մ հռչակեց Եգիպտոսի գերագույն աստված: (0,25)

ա) Ամոն բ) Օսիրիս գ) Պտահ դ) Աթոն

7. Ո՞վ էր Եգիպտոսի միացյալ թագավորության հիմնադիր արքան։
(0,25)

_____

8. Ե՞րբ է հիմնադրվել Աքքադ պետությունը։

_____

9. Երկրների անունները համապատասխանեցնել արքաների անունների հետ։ (1)

1) Թութմոս III
2) Աշոկա
3) Սարգոն
4) Դարեհ I

ա) Աքքադ
բ) Ասորեստան
գ) Եգիպտոս
դ) Հնդկաստան
ե) Աքեմենյան տերություն

1	2	3	4

10. Երկրների անունները համապատասխանեցրե՛ք գիտական նվաճումների հետ։ (1)

1) լուսնային օրացույց
2) աստղային երկնքի քարտեզ
3) մետաքս, հրանոթ
4) սանսկրիտի քերականություն

ա) Չինաստան
բ) Հնդկաստան
գ) Փյունիկիա
դ) Եգիպտոս
ե) Միջագետք

1	2	3	4

11. Արքաների անունները դասավորե՛ք ըստ գահակալման հաջորդականության: (1)

ա) Ռամզես II

բ) Թիգլաթպալասար III

գ) Սարգոն II

դ) Նաբուգոդոնոսոր

ե) Ցին Շի Հուանդի

1	2	3	4	5

12. Իրադարձությունները դասավորե՛լ ժամանակագրական հաջորդականությամբ: (1)

ա) Մետաքսի ճանապարհի կառուցումը

բ) Արիական ցեղերի ներթափանցումը Իրան և Հնդկաստան

գ) Դարեհ I–ի գահակալության սկիզբը

դ) Բաբելոնի գրավումը Կյուրոս Մեծի կողմից

ե) Աքքադ պետության հիմնադրումը

1	2	3	4	5

13. Կարդա՛լ տեքստը և պատասխանե՛լ հարցերին: (1)

“Ռամզեսը՝ մեծ արքան՝ Եգիպտոսի արքան, երբեք թշնամություն չպիտի անի Խաթթիի դեմ՝ նրանից որևէ բան վերցնելու նպատակով: Եվ Խաթթուսիլիսը՝ մեծ արքան՝ Խաթթիի արքան, երբեք թշնամություն չպիտի անի Եգիպտոսի դեմ՝ նրանից որևէ բան վերցնելու նպատակով”:

ա) Ո՞ր փաստաթղթից է վերոհիշյալ հատվածը: (0.5)

_____

բ) Ե՞րբ է այն կնքվել: (0.5)

_____

Պարագրաֆ 7. Հին Հունաստան (7 դասաժամ)

Ուսումնական նյութը տրված է մեկ պարագրաֆով, որի դասավանդման համար հատկացված է 7 դասաժամ։

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՄՈՒՇՈՐԻՆԱԿ ԸՍՏ ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

Դաս	Դասի թեման	Չափորոշչային պահանջները
1	*2*	*3*
16.	Միջավայրը և պատմության վաղ շրջանը	**Կիմանան՝** • Հին հունաստանի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, օգտակար հանածոները • Հին Հունաստանում բնակվող ցեղերը և ցեղային միությունները • Կրետեի ծովապետությունը, նրա կործանումը, Կրետեի մշակութային նվաճումները • Հոմերոսյան դարաշրջանը (Ք. ա. XII-IX դարեր) **Կկարողանան՝** • Բացատրել նոր եզրերը, անունները և հասկացությունները՝ Էգեյան ծով, աքայացիներ, դորիացիներ, հոնիացիներ, Կրետեի ծովապետություն, Կրետե–միկենյան դարաշրջան, հոմերոսյան դարաշրջան, բասիլևս, ագորա • Քարտեզի վրա ցույց տալ Հունաստանի տեղը պատճառները և հետևանքները • Ներկայացնել Հին Հունաստանի դերը և նշանակությունը Հին աշխարհում, Կրետեի մշակութային ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ
17.	Հունաստանը Ք.ա. VIII-VI դարերում	**Կիմանան՝** • Արխաիկ դարաշրջանի Հունաստանի մասին • Ինքնիշխան քաղաք-պետությունների՝ պոլիսների մասին • Ժամանակի նշանավոր պոլիսները՝ Մեգարա, Կորնթոս, Աթենք • Տնտեսական և հասարակական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը • Ք. ա VII–VI դդ. հունական մեծ գաղութացման մասին

1	*2*	*3*
		Կկարողանան՝ • Բացատրել պոլիս, դեմոս, էվպատրիդ, պարտային ստրուկ, խմբիշխանություն, ժողովրդավարություն (դեմոկրատիա), տիրանիա, մեծ գաղութացում եզրերն ու հասկացությունները • Բացատրել տնտեսության մեջ տեղի ունեցած տեղաշարժերի ազդեցությունը հասարակական-քաղաքական կյանքի վրա • Բացատրել Հունական մեծ գաղութացման պատճառները և հետևանքները • Ներկայացնել Մեծ գաղութացման նշանակությունը Միջերկրական և Սև ծովերի ավազանի ժողովուրդների համար
18- 19.	Հին Սպարտան և Հին Աթենքը	**Կիմանան՝** • Հին Սպարտայի և Աթենքի աշխարհագրական դիրքը, հասարակական և պետական կարգը • Սոլոնի և Կլիսթենեսի բարրեֆորոգումները **Կկարողանան՝** • Բացատրել սպարտիատներ, հելոտներ, փաղանգ, “Վահանով կամ վահանի վրա”, լակոնական ոճ, Պելոպոնեսյան միություն, էկլեսիա, ստրատեգոս, օստրակիզմ եզրերը, հասկացություններն ու արտահայտությունները • Կարևորել Սպարտայի և Աթենքի դերը Հին Հունաստանի պատմության մեջ • Համեմատել Սպարտայի և Աթենքի պետական ու հասարակական կարգերը

20.	Հունաստանը Ք.ա. V դարում	**Կիմանան՝** • Ք.ա. V դ. սկզբին Պարսկաստանի դեմ Հունաստանի մղած պատերազմի մասին • Մարաթոնի ճակատամարտի • 300 սպարտացիների և Թերմոպիլի ճակատամարտի մասին • Սալամինի ճակատամարտում հույների տարած փայլուն հաղթանակի մասին • Ք. ա. 449 թ. կնքած հաշտության պայմանագրի և հույն–պարսկական պատերազմների ավարտի մասին • Պատերազմից հետո Աթենքում տեղի ունեցած փոփոխությունների մասին

1	*2*	*3*
		Կկարողանան՝ • Քարտեզի վրա ցույց տալ խոշոր ճակատամարտերի տեղերը • Ներկայացնել Թերմոպիլի և Սալամինի ճակատամարտերի դերը Հունաստանի համար • Ներկայացնել Հունաստանի հաղթանակի նշանակությունը • Կարևորել Պերիկլեսի դերը Աթենքում ժողովրդավարության հետագա խորացման գործում

21-22.	Դասական դարաշրջանի Հունական մշակույթը Հելլենական աշխարհը	**Կիմանան՝** • Որ այն ընդգրկում է Ք. ա. VIդ. վերջից- IV դ. կեսը • Այդ ընթացքում կյանքի տարբեր բնագավառնե-րում հույների ձեռքբերումները • Հունական կրոնը, դիցարանը, գլխավոր աստ-վածներին • Հունական դպրոցը, գրականությունը և թատ-րոնը, գործիչներին • Առաջին օլիմպիական խաղերը **Կկարողանան՝** • Ներկայացնել ու բացատրել բազմաստվա-ծություն, օլիմպիական տասներկու աստվածներ հասկացությունները • Ներկայացնել իմաստասերներին և նրանց դպրոցները՝ Պլատոնի Ակադեմիա, Արիստոտելի Լիկեոն • Բացատրել թե ինչպես է առաջացել թատրոնը • Ներկայացնել Հին Հունաստանի խոշորագույն ողբերգակներին՝ Էսքիլես, Սոփոկլես, Էվրիպիդես • Համեմատել հին հունական և հին հայկական դիցարանները

Դասաժամ 16. Միջավայրը և պատմության վաղ շրջանը

Դասը նվիրված է հունական քաղաքակրթության ակունքների ուսումնասիրմանը: Նախ և առաջ անդրադարձ ենք կատարում Կրետե կղզում առաջին պետականության ստեղծմանը, դրա յուրօրինակությանը և կարևոր ազդեցությանը մայրցամաքային Հունաստանի զարգացման ընթացքի վրա: Այստեղ կարևոր է առանձնացնել վաղ հասարակություններին կյանքում աշխարհագրական գործոնի վճռորոշ պատմական դերը: Տվյալ դեպքում Կրետեն ուներ ոչ միայն հարուստ բնական պայմաններ, այլև նպաստավոր դիրք, այն է՝ համեմատաբար մոտ էր Եգիպտոսի և Մերձավոր Արևելքի հին քաղաքակիրթ հասարակություններին: “Ծովապետություն” եզրը, իր որոշ պայմանականությամբ հանդերձ, վկայում է Կրետեի՝ շրջակա կղզիների և մայրցամաքային Հունաստանի առափնյա բնակավայրերի հետ ունեցած աշխույժ

կապը և Ք.ա. II հազարամյակի կեսերին դրանց նկատմամբ ունեցած տիրապետող դիրքը։

Հույն ժողովրդի կազմավորման գործընթացը, որը լավ ուսումնասիրված է գրավոր աղբյուրների առկայության և պեղումների շնորհիվ, կարող է աշակերտներին մատուցվել՝ համեմատություն կատարելով հայ ժողովրդի կազմավորման հետ։ Իրար ազգակից տարբեր ցեղերի մասնակցությունը հույն ժողովրդի կազմավորմանը երկարաձգեց այդ գործընթացը ավելի քան երկու հազարամյակ, բայց և արդյունքում ձևավորվեց ինքնատիպ հույն ազգը իր հարուստ մշակույթով։

Դասաժամ 17. Հունաստանը Ք.ա. VIII–VI դարերում

Նախ՝ ներկայացվում է Հունաստանում համայնական կարգից անցումը պետության։ Հատուկ ուշադրություն պետք է դաձնել այդ երևույթի հետևանքով հույն ժողովրդի լայնածավալ արտագաղթին դեպի հարևան երկրները, ինչպես նաև անցումային այդ փուլում տիրանիայի (բռնապետության) խաղացած առաջադիմական դերին հասարակության զարգացման գործում։

Դասաժամ 18-19. Հին Սպարտան և Աթենքը

Բաժնի այս երկու դասերը ներկայացնում են նույն գործընթացը՝ կոնկրետ Աթենական և Սպարտական պետությունների կազմավորման օրինակով։ Հունական պոլիսներից առավել բնորոշ այս երկու օրինակով աշակերտներին կարելի է ներկայացնել պետության կառավարման 2 հիմնական տեսակները՝ դեմոկրատական և արիստոկրատական։

Կարևոր է այստեղ նշել կապը օրենքների ընդունման և մասնավոր սեփականության հաստատման միջև։ Ընդ որում՝ սովորութային “օրենքները”, որպես այդպիսին, օրենքներ չեն այդ բառի իսկական իմաստով։ Օրենքները գրավոր (քարե սյան, կավե սալիկների թե մագաղաթի վրա) արձանագրված, պետական իշխանության ուժով ամրապնդված և տվյալ հասարակության մեջ բոլորի համար պարտադիր կանոններ են։ Սովորութային (բանավոր) օրենքների թիկունքում կանգնած է ոչ թե պե-

տության, այլ ավանդույթի և հասարակական կարծիքի ուժը։

Աթենքը ժողովրդավարական, իսկ Սպարտան՝ արիստոկրատական պոլիսի օրինակ էր։

Դասաժամ 20. Հունաստանը Ք.ա. V դարում (¢16)

Այստեղ ուսումնասիրում ենք Հին Հունաստանի պատմության դասական ժամանակաշրջանը, երբ հունական քաղաքակրթությունը հասնում է իր բարձրագույն ծաղկմանը։ Նախ և առաջ անդրադառնում ենք հույն–պարսկական պատերազմներին, որոնք մեծապես նպաստեցին հույն ժողովրդի ազգային ինքնագիտակցության կայացմանը, հունա- կան պոլիսների համախմբմանը ընդհանուր թշնամու դեմ։

Աթենական պետության տնտեսական և քաղաքական հզորացումը պատերազմներից հետո նպաստավոր պայմաններ ստեղծեց դեմոկրատիայի ծաղկման և հունական մշակույթի աննախադեպ վերելքի համար։ Անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը հրավիրել այս երկու երևույթների օրգանական փոխադարձ կապվածությանը, հիմնավորելով, թե ինչու հենց Աթենքը դարձավ հունական մշակույթի կենտրոն։

Դասաժամ 21. Դասական դարաշրջանի հունական մշակույթը

Մշակույթի տարբեր ճյուղերին անդրադառնալիս տեղին է առավել ուշադրություն հատկացնել համահունական մարզախաղերի անցկացմանը և դրանց կարևորությանը հույների համար։ Դրա հետ միասին անհրաժեշտ է նաև ընդգծել ամեն քաղաքացու կրթված լինելու անհրաժեշտությունը, քանի որ հույների պատկերացմամբ լիարժեք մարդը պետք է լիներ և՛ գրագետ և՛ ֆիզիկապես առողջ։

Առանձին կարևորություն ունի հունական թատրոնի առաջացման պատմությունը և նրա խաղացած դերը հույների կյանքում։ Առավել ևս, որ ժամանակակից թատրոնի բոլոր հիմնական ուղղությունները ձևավորվել են արդեն իսկ Հին Հունաստանում։ Կարելի է աշակերտներին օրինակներ բերել մեր թատրոններում բեմադրվող հունական դասական ներկայացումներից։

Դաս 22. Հելլենիստական աշխարհը

Հունաստանի անկումից կարողացավ օգտվել հարևան Մակեդոնիան, որը, հզորանալով, հպատակեցրեց Հունաստանը: Մակեդոնիայի և Հունաստանի ուժերի միավորումը հնարավորություն տվեց պայքար սկսելու Պարսկական տերության դեմ՝ նոր տարածքներ ձեռք բերելու համար:

Ալեքսանդր Մակեդոնացին 10 տարի տևած արշավանքների արդյունքում կարողացավ նվաճել Աքեմենյան տերությունը և ստեղծել մի ընդարձակ կայսրություն: Աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ալեքսանդրի արշավանքը օգտակար եղավ հայերի համար: Հայաստանը, ազատվելով պարսկական տիրապետությունից, կարողացավ վերականգնել իր անկախությունը:

Ալեքսանդրի մահից հետո նրա կայսրությունը տրոհվեց, նրա տեղում ձևավորվեցին բազմաթիվ հելլենիստական պետություններ՝ Սելևկյան տերությունը, Եգիպտոսը, Պերգամոնը: Ուսուցչի խնդիրն է աշակերտնե րին սովորեցնել տարբերակել հունական և հելլենիստական մշակույթը:

Դա հարմար է բացատրել հենց Հայաստանի օրինակով, որտեղ տեղական՝ ազգային մշակույթը որոշակիորեն համեմվել էր հունական մշակույթի տարրերով, իսկ հունարենը կիրառվում էր պաշտոնական գրագրության մեջ:

Պարագրաֆ 8. ՀԻՆ ՀՌՈՄ (7 ժամ)

Հին Հռոմի պատմության ուսումնական նյութը տրված է 8-րդ պարագրաֆում, որի դասավանդման համար հատկացված է 6 դասաժամ:

Դասաժամ 31. Հին աշխարհի պատմության ամփոփում

Առաջին բաժնի ամփոփումը նպատակ ունի ընդհանրացնել սովորողների յուրացրած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ամրապնդել նրանց արժեքային համակարգը։ Ուսուցիչը կարող է կազմել ամփոփիչ հարցարաններ, թեստեր, առաջադրանքներ և այլն։

Յուրաքանչյուր պարագրաֆի սկզբում տրված Բառարանում ընդգրկված են դասագրքում օգտագործված կարևոր պատմական հասկացությունները, եզրերն ու անունները, որոնց մի մասը լրացուցիչ պարզաբանման կարիք է զգում։

Գրավոր կամ բանավոր հարցման միջոցով հանրագումարի են բերվում Հին աշխարհի պատմության ուսումնասիրման արդյունքները։ Այստեղ կարևոր է ամրապնդել առարկայի անհրաժեշտության վերաբերյալ սովորողների կարծիքը, նրանց արժեքային կողմնորոշիչները, վերաբերմունքը։

2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(աղբյուրներ և փաստաթղթեր)

1. Համմուրապիի օրենսգիրքը (հատվածներ)

1) Եթե դատավորը վճիռ է կայացրել, տվել է կնքված փաստաթուղթ, սակայն հետո փոխել է իր վճիռը, նրանք կապացուցեն, որ դատավորը փոխել է վճիռը և նա պիտի վճարի տասներկուպատիկը այդ դեպքի համար նախատեսված գումարի: Այնուհետև նրանք նրան կզրկեն դատավորի պաշտոնից, և նա երբեք այլևս չի նստի դատավորների հետ միասին:

2) Եթե ազատ մարդը գողանա տաճարի կամ պետության ունեցվածքը, ապա այդ մարդը պիտի սպանվի: Նա, ով նրա ձեռքից գողացված բարիք կվերցնի, նույնպես պիտի սպանվի:

3) Եթե ազատ մարդը օգնել է պետական ստրուկին և ստրկուհուն կամ մասնավոր ստրուկին և ստրկուհուն փախչել քաղաքի դարպասից, ապա նա պիտի սպանվի:

4) Եթե ազատ մարդը ծառ է կտրել ուրիշ ազատ մարդու այգում, առանց տիրոջ գիտության, ապա նա նրան պիտի կես մինա արծաթ վճարի:

5) Եթե ազատ մարդը ցանկանում է արծաթ, ոսկի կամ որևէ այլ բան տա ուրիշ մարդու պահպանելու համար, ապա նա պիտի վկային ցույց տա ամբողջը, կազմակերպի պայմանագիրը, հետո միայն տա պահպանության:

6) Եթե ազատ մարդու կինը սպանել է ամուսնուն ուրիշ մարդու համար, այդ կնոջը պիտի ցցի հանել:

7) Եթե ազատ մարդը հանի ազնվականի աչքը, ապա նրա աչքը պիտի հանել:

8) Եթե բժիշկը վիրահատի ազատ մարդուն բրոնզե դանակով, և ազատ մարդը մահանա, կամ եթե վիրահատի նրա ակնաբիբը և վնասի նրա աչքը, ապա բժշկի ձեռքը պիտի կտրել:

2. Պայմանագիր խեթական արքա Սուպպիլուլիումաս I–ի և Ամուրրուի արքա Ազիրուի միջև (Ք.ա. XIV դար) (հատվածներ)

“Այսպես է ասում Սուպպիլուլիումասը՝ Արևը, մեծ արքան, Խաթթիի արքան, հերոսը, Ամպրոպի աստծու սիրելին։

Ես՝ Արևս, քեզ իմ ծառան դարձրեցի։ Եվ եթե դու, Ազիրու, պաշտպանես Խաթթիի արքայի՝ տիրոջդ երկիրը, Խաթթիի արքան՝ տերդ, նույն կերպ կպաշտպանի քեզ ... Նախկինում Եգիպտոսի արքան, Խուրրիի արքան, Կինձայի արքան, Նուխաշ- շեի արքան, Նիայի արքան, Մուկիշի արքան, Հալեպի արքան, Կարգամիսի ար- քան, բոլոր այս արքաները թշնամի էին Արևին։ Բայց Ազիրուն՝ Ամուրրուի արքան,

անջատվեց Եգիպտոսի դարպասից և դարձավ Արևիս՝ Խաթթիի արքայի ծառան ... Նա, ով հաշտ է Արևի հետ, քո հետ էլ պիտի հաշտ լինի։ Բայց նա, ով թշնամի է Արևին, պիտի քո թշնամին էլ լինի։ Երբ Խաթթիի արքան արշավանքի մեջ է Խուրրի երկրում, կամ Եգիպտոսում, կամ Կարանդունիաշում, կամ Աշտատա- յում, կամ Ալզիում, այն երկրներում, որոնք սահմանակից են քո երկրին և թշնա- մի են Արևին, բայց հաշտ են քեզ հետ, երբ Կինձան և Նուխաշշեն կռվեն Խաթթիի դեմ, և երբ Խաթթիի արքան ճակատամարտ տա նրանց դեմ, և դու՝ Ազիրու, քո սեփական նախաձեռնությամբ քո ջոկատներով և մարտակառքերով ճակատա- մարտի չգաս ... դու կխախտես երդումդ”։

3. Թութմոս III–ի ասիական արշավանքը (հատվածներ)

“Փարավոնը խորհուրդ հրավիրեց իր հաղթական զորքի հետ և ասաց հետևյալը. “Քադեշի այդ խղճուկ թշնամին եկել և մտել է Մեգիդդո։ Այս պահին նա այնտեղ է։ Նա հավաքել է իր շուրջը Եգիպտոսին հավատարիմ բոլոր երկրների իշխաններին, նաև նրանց, ովքեր Նախարինայում են, Միտաննիում, Խուրրիում, Կոդեում, իրենց ձիերի, հետևակ զորքի և մարդկանց հետ. ինչպես հաղորդել են, նա ասել է, թե՝ ես կսպասեմ Մեգիդդոյում՝ փարավոնի դեմ կռվելու համար...”։

Այնուհետև փարավոնը առաջնորդեց իր զորքին, որը լավ պատրաստված էր։ Նա չհանդիպեց գեթ մեկ թշնամու։ Նրանց հարավային թևը Տաանախում էր, այն դեպքում, երբ հյուսիսային թևը Քինա հովտի հարավում էր ... Փարավոնը հասավ Մեգիդդո հարավից՝ Քինա գետի ափի մոտ յոթ ժամ երթից հետո։ Փարավոնի հա- մար ճամբար խփվեց և զորքին ասվեց հետևյալը. “Պատրաստվեք։ Ձենքերդ պատրաստ, քանի որ առավոտյան պիտի մարտնչեք

այդ խղճուկ թշնամու դեմ...”: Առավոտյան փարավոնը նստեց իր ոսկեզօծ մարտակառքը, ինչպես Հոր աստվածը, իսկ նրա հայր Ամոն աստվածը նրա ձեռքերն ամրացրեց ..... Փարավոնը հաղթեց՝ իր զորքի գլուխն անցած: Երբ նրանք տեսան հաղթանակող փարավոնին, սարսափահար փախան դեպի Մեգիդդո: Նրանք լքեցին իրենց ձիերը և ոսկեզօծ ու արծաթազօծ մարտակառքերը:

Այնուհետև նրանց ձիերն ու ոսկեզօծ ու արծաթազօծ մարտակառքերը բռնվեցին որպես հեշտ ավար: Վերցվեց նաև խղճուկ թշնամու վրանը: Հետո ամբողջ զորքը իր տուրքը մատուցեց Ամոնին, որը հաղթանակ էր պարգևել իր որդուն”:

Բնագրերի անգլերեն տեքստից
թարգմանեց Ա. Քոսյանը:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (35 ժամ)

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Միջին դարերի պատմությունն ընդգրկում է մարդկային հասարակության պատմական զարգացման մեկ հազարամյակի պատմություն, որն իր անժխտելի կնիքն է թողել նույնիսկ ժամանակակից աշխարհի վրա։ Միջին դարերում ստեղծված բազմաթիվ մշակութային և գիտական արժեքներ խորապես նպաստել են ժամանակակից ժողովուրդների տնտեսական, քաղաքական և մշակութային վերելքին։

Միջին դարերի պատմությունը գրված է գիտության վերջին նվաճումների ընձեռած տվյալների հիման վրա։ Այն ներկայացված է 15 պարագրաֆներով։

Դասագրքի կարևոր խնդիրներից մեկն է պարզաբանել այն վիթխարի դերը, որ խաղացել են մարդկային հասարակության պատմության մեջ մեծ ազդեցություններ ունեցած կրոնները՝ քրիստոնեությունը, բուդդայականությունը և իսլամը։

Դասագիրքը նպատակ ունի ծանոթացնել նաև այն հիմնախնդիրներին, որոնք սկզբնավորվելով միջնադարում, դեռ այսօր էլ սպասում են իրենց լուծմանը։ Այսպիսով՝ միջնադարը և ժամանակակից աշխարհը սերտորեն շաղկապված են միմյանց, ինչը և անհրաժեշտ է դարձնում դասընթացի ուսումնասիրությունը հանրակրթական դպրոցում։

1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ

Միջնադարի պատմությունը ներկայացված է 15 պարագրաֆներով, որոնց դասավանդմանը հատկացվում է 35 դասաժամ։

Թեմա 3. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում և Ամերիկայում: (20 դասաժամ)

Միջնադարի այս թեման ընդգրկում է ութ պարագրաֆ, որոնց դասավանդմանը նախատեսված է հատկացնել 20 դասաժամ։ Մեկ ժամի խնդիրը առաջարկվում է լուծել 2–րդ բաժնի 6 ժամից 1–ը վերցնելով, քանի որ այն ունի 5 պարագրաֆ, իսկ ծրագրով հատկացված է 6 ժամ։

Թեմայի նպատակն է սովորողներին ցույց տալ և բացատրել, թե որոնք էին այն նախադրյալները, որ նպաստեցին միջնադարյան հասարակության ձևավորմանը և հաստատմանը։ Բնականաբար, այստեղ շեշտը պետք է դնել առաջին հերթին Հռոմեական կայսրության երբեմնի հզորության անկման և այնպիսի մի կարևոր երևույթի վրա, ինչպիսին էր Ժողովուրդների մեծ գաղթը։ Եթե Ժողովուրդների մեծ գաղթը Եվրոպայում ըստ էության ավարտվեց XI դարում, ապա Մերձավոր Արևելքի համար այն ընդգրկեց հիմնականում XI–XVI դարերն ընկած ժամանակաշրջանը։

Այս ժամանակաշրջանի մյուս կարևոր իրադարձությունը, որը խորապես ազդեց Եվրոպայի և Մերձավոր Արևելքի հետագա պատմական զարգացման վրա՝ Հռոմեական կայսրության տրոհումն էր Արևմտյան և Արևելյան կայսրությունների, որոնցից առաջինը արդեն V դարում դադարեց գոյություն ունենալուց, մինչդեռ երկրորդը իր գոյությունը շարունակեց ևս մեկ հազարամյակ։ Պետք է լուսաբանվեն այն սոցիալ–տնտեսական յուրահատկությունները, որոնք պայմանավորեցին երկու կայսրությունների ճակատագրերի այդ տարբերությունը։

Բյուզանդական կայսրության մասին խոսելիս պետք է շեշտել այն փաստը, որ այստեղ կայսր կարող էր դառնալ հասարակության ցանկացած խավից դուրս եկած անձնավորություն։ Այդպիսին էր չքավոր գյուղացու զավակ Հուստինիանոսը, որը Բյուզանդական կայսրությունը հասցրեց իր հզորության գագաթնակետին։ Պատահական չէ, որ նրան

անվանել են նաև “վերջին հռոմեացի կայսր”:

Պատմական այս նույն ժամանակաշրջանում ծնունդ առած պետություններին մեջ հատուկ ուշադրության առարկա պետք է լինեն՝ հատկապես Հին Ռուսիան և Գերմանական պետությունը: Ուսուցիչը պետք է հատուկ անդրադառնա Հին Ռուսիայի և հատկապես Հայկական հարստության օրոք Բյուզանդիայից քրիստոնեություն ընդունելու փաստին:

Եվ, վերջապես, պատմական այս ժամանակաշրջանը ծնունդ է տվել ավատատիրական հասարակարգին, որի դասական զարգացման պատմության օրինակ է մեզ տալիս Ֆրանկական պետությունը: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ճորտության ինստիտուտը շատ քիչ է տարածված եղել, հատկապես Արևմտյան Եվրոպայի երկրներում, որ գյուղացիությունը անհամեմատ ազատ դրության մեջ է գտնվել այս ժամանակաշրջանում, շատ դեպքերում կամովին փնտրելով խոշոր հողատիրոջ հովանավորությունը, այս ժամանակաշրջանում տիրող համընդհանուր անիշխանության ու քաոսի պայմաններում:

Պետական հաստատությունների և պետության ձևերի առկայության իմաստով մեծ ուշադրություն պետք է դարձվի այն առանձնահատուկ և ժամանակի մտայնությունը բնորոշող երևույթի վրա, որպիսին էր այսպես կոչված հռոմեական ավանդույթի կենսունակությունը: Դրա բնորոշ դրսևորումներն էին Ֆրանկական կայսրության հիմնումը 800 թ. և Սրբազան հռոմեական կայսրության ստեղծումը 962 թվականին: Ընդ որում՝ Կարլոս Մեծի կայսրությունը ևս պաշտոնապես կոչվում էր Հռոմեական: Սրբազան հռոմեական կայսրությունը, թեկուզ և անվանապես, գոյատևեց մինչև 1806 թվականը:

Միջնադարի պատմության այս ժամանակաշրջանը բնութագրվում է աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև ծավալված անզիջում պայքարով: Այդ պայքարը ցույց տվեց Հռոմի պապերի ողջ աստվածապետական միտումները և Եվրոպան իրենց տիրապետության տակ առնելու ձգտումը, որն, անշուշտ, հետադիմական երևույթ էր:

Պապականության հեղինակության բարձրացմանը XI–XIII դարերում մեծապես նպաստեցին խաչակրաց արշավանքները: Հատկանշական է, որ խաչակրաց արշավանքների արդյունքները ևս նույնքան կարճատև դուրս եկան, որքան Հռոմի պապերի աստվածապետական նկրտում-

ները։ XIII դարը ավարտվեց երկուսի էլ անկմամբ։

Արդեն Խաչակրաց II և III արշավանքները բացահայտեցին, որ եվրոպական երկրները միասնաբար հանդես գալ չեն կարող։ Դրա վառ ապացույցը հանդիսացավ Խաչակրաց IV արշավանքը, երբ քրիստոնյաները քրիստոնյաների դեմ ելան, դրանով իսկ նախապատրաստելով Բյուզանդիայի կործանումը և նրա տարածքում օսմանյան տիրապետության հաստատումը։

XIV դարը, իրավամբ, կարելի է համարել միջնադարյան ավատատիրական հասարակության մայրամուտը։ Դա իր դրսևորումը գտավ ավատատիրության անկման մեջ, երբ տերունական տնտեսությունը սկսեց վերանալ, և գյուղացիները ազատագրվեցին ավատատերերից ունեցած կախումից։ Արհեստագործության բնագավառում այն իր արտահայտությունը գտավ մանուֆակտուրաների առաջացման և համքարությունների ապրած ճգնաժամի մեջ, քանզի նրանք կորցրել էին իրենց երբեմնի առաջադիմական դերը և վերածվել էին փակ կորպորացիաների, որտեղ ենթավարպետները, ըստ էության, վերածվում էին վարձու բանվորների։

Միջնադարյան հասարակական և պետական կարգի ճգնաժամի արտահայտություն էր նաև դասային ներկայացուցչական հաստատությունների տարածումը Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում։ Դասային միապետության հաստատումը ինքնըստինքյան վկայությունն է ավատատիրության անկման։

Ավատատիրական հասարակության ճգնաժամային իրադրության մեջ գտնվելու արտահայտություններից մեկն էլ հռոմեական կաթոլիկ եկեղեցու դիրքերի թուլացումն էր։ Դա իր դրսևորումն ունեցավ, այսպես կոչված, ազգային հերետիկոսությունների երևան գալով, մասնավորապես՝ Անգլիայում և Չեխիայում։ Ազգային կոչված հերետիկոսությունները նույնպես արդյունք էին ազգային կենտրոնացված միապետությունների առաջացման։

Հիշյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից ներկայացվել է Հարյուրամյա պատերազմը։ Պատերազմում տարած հաղթանակը ամրապնդեց ֆրանսիական պետության դիրքերը և հնարավորություն ընձեռեց XV դարում ավարտելու Ֆրանսիայի միավորման գրեթե երեքդարյա գործընթացը։

Այս նույն ժամանակամիջոցում, սակայն, Եվրոպայի արևելքում աստիճանաբար կազմավորվում և զորեղանում էր Մոսկովյան պետությունը, որը և կոչված էր ապագայում սանձելու օսմանյան թուրքերի անհագուրդ տենչերը։ Իվան III–ի գործունեությունը հնարավորություն ընձեռեց միավորելու ռուսական երկրները և կերտելու կենտրոնացված պետություն։ Յուրացնելով բյուզանդական պետական զինանշանը՝ երկգլխանի արծիվը, Իվան III–ը, ըստ էության, Մոսկովյան պետությունը հռչակեց Բյուզանդական կայսրության ժառանգորդ։

XVI դարը նշանավորվեց ռուսական պետության տարածքի ընդլայնմամբ և կենտրոնական իշխանության ուժեղացմամբ։ XVI դարի սկզբին, Բորիս Գոդունովից հետո ծայր առած խառնակ ժամանակներում, երբ տեղի ունեցավ լեհական ինտերվենցիան, հայրենասիրական շարժման վերելքը հանգեցրեց երկրի ազատագրմանը և Ռոմանովների արքայատոհմի հաստատմանը (1613թ.) Ռուսաստանում։

Ռեֆորմացիայի շարժումը, որ ուղղված էր Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և պապականության շահամոլ գործունեության դեմ, բացահայտեց պապական կուրիայի ամբողջ երեսպաշտությունը։

Ռեֆորմացիայի խնդրում յուրատեսակ ուղիով ընթացավ Անգլիան։ Այստեղ ռեֆորմացիան կատարվեց վերևից՝ թագավորի և խորհրդարանի կողմից։ 1534 թ. ընդունված գերագահության մասին ակտով անգլիկան եկեղեցին ենթարկվում էր թագավորին։ Անգլիկան եկեղեցում պահպանվեց եպիսկոպոսապետությունը և որոշ խորհուրդներ կաթոլիկ եկեղեցուց, որով այն միջին տեղ գրավեց կաթոլիկության և բողոքականության միջև։

XV–XVI դարերը նշանավորվեցին աշխարհագրական մեծ հայտնագործություններով, որոնք և սկիզբ դրեցին գաղութային համակարգին։ Այս խնդրում մեծ է եղել Քրիստափոր Կոլումբոսի դերը։

Ամերիկյան մայրցամաքի պատմությունը ուսումնասիրելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել ացտեկների, մայաների և ինկաների քաղաքակրթությունների ստեղծած արժեքների վրա։ Այդ քաղաքակրթությունների անխնա ոչնչացումը իսպանական գաղութային քաղաքականության ընդհանուր դրսևորումը եղավ։

Ա. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴ

1. Նորաստեղծ պետությունները նախկին Արևմտյան Հռոմեական կայսրության տարածքում (պարագրաֆ 9–ի համար)

V-VII դդ. գերմանական ցեղերը ստեղծեցին պետություններ գրավված տարածքներում

- Վանդալները՝ Հյուսիսային Աֆրիկայում
- Վեստգոթերը (արևմտյան գոթեր)՝ Իսպանիայում
- Օստգոթերը (արևելյան գոթեր)՝ Իտալիայում
- Անգլերն ու սաքսերը՝ Բրիտանական կղզիներում
- Ֆրանկները՝ Գալլիայում

2. **Կարլոս Մեծը** և **նրա կայսրությունը** (պարագրաֆ 9–ի համար)

Կարլոս Մեծի կառավարման ընթացքում (768-814 թթ.) Ֆրանկական պետությունը դարձավ Եվրոպայի խոշորագույն պետություններից մեկը: Կարլոսի բանակը ավելի քան 50 արշավանք է կատարել հարևան երկրներ:

Արշավանքների ուղղությունները

- Դեպի Իտալիա՝ լանգոբարդները ջախջախվեցին, Իտալիան մտցվեց կայսրության կազմի մեջ:
- Դեպի Իսպանիա՝ արաբների դեմ. Պիրենեյան լեռներից հյուսիս ընկած տարածքները մտցվեցին կայսրության կազմի մեջ:
- Դեպի Սաքսերի երկիր (Հռենոսի և էլբայի միջև)՝ 8 արշավանք: Այդ տարածքը միացվեց կայսրությանը:

Կարոլինգյան վերածնունդ՝ Կարլոս Մեծի ժամանակաշրջանը

- 800 թ.- Հռոմի պապը Կարլոս Մեծին հռչակեց կայսր: Հռոմեական կայսրության անկումից հետո (476թ.) առաջին անգամ Արևմուտքում կայսերական իշխանությունը վերականգնվեց:
- Անտիկ մշակույթի վերածնունդը (դպրոցների բացում, ակադեմիայի առաջացումը):

Կարլոս Մեծի կայսրությունը ըստ Վերդենի համաձայնագրի (843թ.) բաժանվեց 3 մասի

Արևմտաֆրան - կական պետու- թյուն (ապագա՝ Ֆրանսիան)	Արևելաֆրան- կական պետու- թյուն (ապագա՝ Գերմանիան)	Լոթարիայի թագավորությու ն (ապագա՝ Իտալիան)

1.3. ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ ԸՍՏ ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

Պարագրաֆ 12. Խաչակրաց արշավանքները (2 ժամ)

Դաս	Դասի թեման	Չափորոշչային պահանջները
1	*2*	*3*
12	12. Խաչակրաց շաժումը	**Կիմանան՝** • Խաչակրաց արշավանքների և շարժման պատճառներն ու հետևանքները • Արևելքում առաջացած խաչակրաց պետությունները • Հոգևոր–ասպետական միաբանությունները • Մուսուլմանների կողմից Երուսաղեմի գրավման մասին • Երեք խաչակիր արքաներին • Խաչակրաց արշավանքների հետևանքները Խաչակիրների առնչությունները Կիլիկիայի հայկական թագավորության հետ, վերլուծել նրանց գործողությունները **Կկարողանան՝** • Քարտեզի վրա ցույց տալ խաչակրաց արշավանքների ուղղությունները • Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Արևելքում առաջացած խաչակրաց պետությունները • Բացատրել խաչակրաց արշավանքների պատճառները, առիթը, հետևանքները • Վերլուծել խաչակրաց շարժման անկման պատճառները • Համեմատել երեք խաչակիր արքաներին • Բացատրել խաչակիրներ, հոգևոր–ասպետական միաբանություններ հասկացությունները • Վերլուծել խաչակրաց շարժման պատճառներն • ու հետևանքները

ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ

Դաս. Ավատատիրական հասարակությունը

Դասի նպատակը և խնդիրները՝

Կիմանան՝

- Ավատատիրական հարաբերությունների ձևավորման
- Ավատատիրական հասարակության առաջացման երեք հիմնական ուղիները
- Ավատատիրական աստիճանակարգության
- Գյուղական համայնքի
- Միջնադարյան քաղաքների առաջացման ու զարգացման նախադրյալների
- Համքարությունների մասին

Կկարողանան՝

- Ներկայացնել ավատատիրական հասարակության առաջացման հիմնական ուղիները
- Բացատրել ավատատեր, սենյոր, վասալ, համքարություն, ասպետ, եռադաշտային համակարգ, գիլդիա հասկացությունները
- Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ միջնադարյան նշանավոր քաղաքները՝ Ջենովան, Վենետիկը, Մարսելը, Միլանը, Քյոլնը, Փարիզը
- Կազմել ավատատիրական աստիճանակարգության գծապատկերը
- Համեմատել ավատատիրության ձևավորումը Եվրոպայում և Հայաստանում

Դասի ընթացքը

I. Խթանման փուլ, 2–3 րոպե։

Ուսուցիչը կարող է հարցնել թե ի՞նչ հասարակարգեր են ուսումնասիրել սովորողները մինչև այժմ, ի՞նչն էր դրանց բնորոշ։ Ապա ներկայացնի, որ այժմ իրենք պետք է ծանոթանան նոր՝ ավատատիրական հասրակությանը, և որ դրա առաջացման երեք հիմնական ուղիներ են եղել։

II. Հիմնական մաս կամ իմաստի ընկալման փուլ, 30 րոպե:

Այս փուլին հատկացնում ենք 30 րոպե, քանի որ նախատեսվում է, որ յուրաքանչյուր հատված ուսումնասիրվելու է ԽԻԿ համակարգով:

Դրանից հետո ուսուցիչը գրատախտակին գծում է, կամ սալիկահանդեսի (սլայդ–շոու) տեսքով ցուցադրում է ավատատիրական աստիճանակարգությունը (սովորողների օգնությամբ) (Խ) և էվրիստիկ զրույցի միջոցով համեմատում այն Հայաստանի իշխանական բուրգի հետ: Ներկայացնում է նաև միջնադարյան ասպետին:(Ի) Նույն ձևով զուգահեռներ են անցկացվում նաև Եվրոպայի և Հայաստանի գյուղական համայնքների միջև:(Կ)

Ուսուցիչը հարցնում է, թե ինչ խոշոր քաղաքներ են հիշում սովորողները նախորդ շրջանից Եվրոպայում և Հայաստանում: (Խ) Պատասխանները գրանցելուց հետո ուսուցիչը ներկայացնում է քաղաքների առաջացման պատճառները, քաղաքները և լրացնում գրատախտակին չնշված քաղաքները: Այնուհետև խոսում են համքարությունների և գիլդիաների մասին: (Ի) Կարելի է ցուցադրել նկարներ, կամ շարունակել սալիկահանդեսը:

Գնահատել կարելի է ցանկացած պահի՝ ելնելով սովորողների ակտիվությունից և յուրացման աստիճանից:

III. Ամփոփում, 10 րոպե:

Դասի վերջում տրված հարցերի միջոցով կարելի է ամփոփել նյութը:

Տանը կարելի է հանձնարարել նկարագրել միջնադարյան ասպետին, արդիականացնել՝ “Կա՞ն արդյոք “ասպետներ” այսօր”:

Կիրառված մեթոդներ, հնարներ

Մտքերի տարափ, զրույց, փոփոխված դասախոսություն, զննականություն:

Ուսումնական նյութեր

Համակարգիչ, տեսասարք, ուսումնական նկարներ, նկարազարդումներ, դասագիրք, աշխատանքային տետր:

Միջառարկայական, ներառարկայական կապեր
Հայոց պատմություն, Հին աշխարհի պատմություն։

Դասի տիպը
Նոր նյութի հաղորդման, համակցված դաս։

Դասաժամ 52. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում և Ամերիկայում թեմայի ամփոփում: (1 դասաժամ)

Թեմա 4. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևելքում (12 ժամ)

Առարկայի ծրագրով առանձին թեմայով ներկայացված են միջնադարյան Արևելքի երկրները՝ Արաբական խալիֆայությունը, Մոնղոլական կայսրությունը, Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Օսմանյան կայսրությունը և Իրանը: Թեմայի ուսումնասիրմանը հատկացված է 12 դասաժամ:

Բազմիցս օտարերկրյա նվաճումների ենթարկված Չինաստանը միշտ կարողացել է պահպանել յուրահատուկ ազգային կերպարը և մշակույթը: Հատկանշական է, որ կրթական համակարգում պարտադիր էր կոնֆուցիական գրականության ուսումնասիրումը, իսկ վարչական պաշտոն ստանալու համար քննությունների հանձնումը և ըստ գիտելիքների ու հմտության, այսինքն՝ ինքնուրույն ճշգրիտ որոշումներ ընդունելու ունակության, պաշտոնների ստանձնումը: Չինաստանը ուրույն տեղ է գրավում նաև գիտության զարգացման առումով: Տպագրության գյուտը, թղթի գյուտը, դեռևս XI դարում շարժական հիերոգլիֆների ստեղծումը, վառոդի գյուտը, առաջին լրագրերի հրատարակումը, առաջին թղթադրամի օգտագործումը չինական գյուտարարության նվաճումներն են: Այս ամենը միանգամայն հասկանալի է դարձնում Չինաստանի առաջընթացի պատճառները: Չինաստանի պատմությունը մի ուսանելի դաս է, թե ինչպես կարելի է գիտական մտքի շնորհիվ և անցյալի գիտակցված իմացության միջոցով զարգանալ վերընթաց ուղիով:

Մեզ համար նշված երկրների պատմությունը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում: Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ Ղազնայի պետության կողմից Հնդկաստանի հյուսիս–արևմուտքի գրավումը և Դելիի սուլթանության ստեղծումը XIII դ. սկզբին, հանգեցրեց երկրում իսլամի բռնի տարածմանը և հակամարտության սրմանը հնդուիզմի և իսլամի հետևորդների միջև: Մեր օրերում դա իր արտացոլումը գտավ Հնդկաստանի և Պակիստանի պետությունների ստեղծմամբ, նրանց հակամարտությունը շարունակվում է առ

այսօր։ Հատկանշական է, որ այդ արյունալի և անիմաստ հակամարտությանը վերջ տալու համար Մեծ մողոլ շահ Աքբարը դեռևս 1593 թ. պատմության մեջ առաջին անգամ հավատի հանդուրժողության հրամանագիր արձակեց և թույլատրեց, որպեսզի բոնի իսլամացվածները ազատորեն վերադառնան իրենց նախկին կրոնին, որը իսլամի մեջ ընդունված նորմ չէ, և բոլորը համահավասար պաշտոններ գրավեն՝ առանց որևէ խտրականության։

Ճապոնիայի պատմությունը ևս շատ ուսանելի դասեր ունի, որոնք նույնպես խարսխվում են անցյալի հետ անխզելի կապի, կրոնական և մշակութային արժեքների իմացության և պահպանման վրա։

XVI դարի երկրորդ կեսի – XVII դարի սկզբի համաեվրոպական իրադարձությունների մեջ շրջադարձային նշանակություն է ունեցել Նիդերլանդական հեղափոխությունը՝ իբրև առաջին հաղթական բուրժուական հեղափոխություն, որն ավարտվեց Միացյալ Պրովինցիաների Հանրապետության ստեղծմամբ։ Ընդ որում, անհրաժեշտ է անպայման շեշտել, որ այդ հեղափոխությունն ընթացել է ազգային–ազատագրական շարժման դրոշի ներքո։

Դասաժամ 65. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևելքում թեմայի ամփոփում (1 ժամ)

ՆՄՈՒՇՈՐԻՆԱԿ

Նշել ճիշտ պատասխանը (1–8–րդ առաջադրանքներ):

1. Ե՞րբ է առաջին անգամ հրավիրվել դասային ներկայացուցիչների ժողովը՝ Գլխավոր շտատները, Ֆրանսիայում: (0,25)

ա) 1453 թ. գ) 1302 թ.
բ) 1285 թ. դ) 1389 թ.

2. Ե՞րբ է ստեղծվել Լատինական կայսրությունը: (0,25)

ա) 1099 թ. գ) 1190 թ.
բ) 1204 թ. դ) 1291 թ.

3. Ե՞րբ է տեղի ունեցել Կոսովոյի ճակատամարտը: (0,25)

ա) 1453 թ. գ) 1389 թ.
բ) 1517 թ. դ) 1380 թ.

4. XIII դարի սկզբներին ո՞վ միավորեց մոնղոլական ցեղերին և ընտրվեց նրանց կառավարիչ: (0,25) ա) Սելջուկ գ) Չինգիզ խան
բ) Բաթու խան դ) Մուավիա

5. Ո՞վ է հայտնագործել Ամերիկա մայրցամաքը: (0,25)

ա) Մագելան գ) Վասկո դա Գամա
բ) Կորտես դ) Քրիստափոր Կոլումբոս

6. Ո՞վ է “Ուտոպիա” ստեղծագործության հեղինակը: (0,25)

ա) Պետրարկա գ) Միքելանջելո
բ) Թոմաս Մոր դ) Ռաֆայել

7. Ժամանակակիցներն ո՞ւմ են անվանել “Ժնևի պապ”: (0,25)

ա) Մարտին Լյութեր գ) Ջորդանո Բրունո
բ) Ժան Կալվին դ) Գալիլեո Գալիլեյ

8. Ե՞րբ է ավարտվել Երեսնամյա պատերազմը: (0,25)

ա) 1612 թ. գ) 1650 թ.
բ) 1640 թ. դ) 1648 թ.

Գրել ճիշտ պատասխանը (9–10–րդ առաջադրանքներ):

9. Ո՞ւմ օրոք Բաղդադը դարձավ Արաբական խալիֆայության մայրաքաղաք: (0,5)

_____

10. Հավատի որոշման ի՞նչ սկզբունք հաստատվեց Գերմանիայում Ռեֆորմացիայի արդյունքում: (0,5)

_____

11. Համապատասխանեցրե՛ք ստեղծագործությունը հեղինակի ան- վան հետ: (1)

1) Դանթե
2) Ռաֆայել
3) Ֆրենսիս Բեկոն
4) Լեոնարդ ո դա Վինչի

ա. “Նոր Ատլանտիդա”
բ. “Խորհրդավոր ընթրիքը”
□ . “Աստվածային կատակերգություն”
դ. “Սիքստինյան Տիրամայրը”
ե. “Աստվածային կատակերգություն”

1	2	3	4

12. Համապատասխանեցրե՛ք երկիրը մշակութային իրադարձության հետ: (1)

1) Թղթի գյուտը
2) Վերածննդի սկիզբը
3) Ռեֆորմացիայի սկզբնավորումը
4) Կաբուկի թատրոնի ստեղծումը

ա. Իտալիա
բ. Հնդկաստան
գ. Ճապոնիա
դ. Գերմանիա
ե. Չինաստան

1	2	3	4

13. Իրադարձությունները դասավորե՛լ ժամանակագրական հաջորդականությամբ: (1)

ա) Նիդերլանդների ազգային–ազատագրական պատերազմի սկիզբը

բ) Ռոմանովների արքայատոհմի հաստատումը Ռուսաստանում

գ) Երեսնամյա պատերազմի սկիզբը

դ) Մեքսիկայի նվաճումը Կորտեսի կողմից

ե) Օսմանյան պետության հիմնումը

1	2	3	4	5

14. Պատմական կարևոր գործընթացները դասավորե՛լ ըստ դրանց սկզբնավորման ժամանակագրական հաջորդականության: (1)

ա) Աշխարհագրական մեծ հայտնագործություններ

բ) Ճապոնիայի ինքնամեկուսացումը արտաքին աշխարհից

գ) Ազգային հերետիկոսություններ

դ) Ռեֆորմացիա

ե) Դասային միապետությունների ձևավորումը Եվրոպայում

1	2	3	4	5

15. Կարդա՛լ մեջբերումը և պատասխանե՛լ հարցերին: (1)

“Ես կարող եմ անել այն, ինչ ցանկանում եմ: Բոսֆորի երկու ափերը պատկանում են ինձ. արևելյանը, քանի որ այնտեղ ապրում են օսմանցիները, և արևմտյանը, քանի որ դուք ի վիճակի չեք պաշտպանելու այն... “:

ա) Ո՞վ է այս պատասխանի հեղինակը: (0,5)

_____

բ) Ի՞նչ իրադարձության ժամանակ է ասել նա: (0,5)

_____

Դասաժամ 66. Բաժին երկրորդի՝ Միջին դարերի պատմության ամփոփում

Երկրորդ բաժնի ամփոփումը նպատակ ունի ընդհանրացնել միջնադարի վերաբերյալ սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ամրապնդել նրանց արժեքային համակարգը։ Ուսուցիչը կարող է կազմել ամփոփիչ հարցարաններ, թեստեր, առաջադրանքներ և այլն։

Յուրաքանչյուր պարագրաֆի սկզբում տրված Բառարանում ընդգրկված են դասագրքում օգտագործված կարևոր պատմական հասկացությունները, եզրերն ու անունները, որոնց մի մասը լրացուցիչ պարզաբանման կարիք է զգում։

Դասագրքում տրված երկրորդ բաժնի ամփոփման նյութը կօգնի կազմակերպելու բանավոր հարցում, որի միջոցով կամրապնդվեն միջին դարերի վերաբերյալ տեսական գիտելիքները։

Դասաժամ 67-68. Հին աշխարհի և Միջին դարերի պատմության ընդհանուր ամփոփում

*
* *

Սիրելի՛ ուսուցիչներ, ձեռնարկում տրված խորհուրդներն ու պարզաբանումները, հուսով ենք, որ կօգնեն ավելի արդյունավետ կազմակերպել պատմության դասավանդումը 7–րդ դասարանում, իրականացնել առարկայի չափորոշչով և ծրագրով սահմանված կրթական նպատակներն ու խնդիրները, հասնել սովորողների կողմից վերջնարդյունքների ձեռքբերմանը։

3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(աղբյուրներ և փաստաթղթեր)

1. Արքունի արարողություն (Լիուտպրանդ, իտալական թագավոր Բերենգարի դեսպանը, 949 թ.)

Կոստանդնուպոլսում կայսերական պալատին անմիջականորեն հարում է զարմանահրաշ փառահեղության ու գեղեցկության մի դահլիճ, որը հույներն անվանում են Մագնավրա կամ Ոսկյա պալատ։ Կոստանդին կայսրը կարգադրել էր այն կարգի բերել ընդունելու համար ինձ հետ միաժամանակ ժամանած իսպանական խալիֆի դեսպաններին և Լիուտֆրեդին, Մայնցից մի հարուստ վաճառականի, որն այն ժամանակ ուղարկվել էր գերմանական կայսրի կողմից։ Կայսեր գահի առաջ կանգնած էր պղնձյա, բայց ոսկեզօծ մի ծառ, որի ճյուղերին թառել էին բազում տարբեր տեսակի թռչուններ, պատրաստված բրոնզից և նույնպես ոսկեզօծված։ Թռչուններն արձակում էին յուրաքանչյուրն իր հատուկ մեղեդին, իսկ կայսեր գահավորակը այնպես հմտորեն էր պատրաստված, որ սկզբում թվում էր ցածր, համարյա գետնին հավասար, ապա փոքր–ինչ ավելի բարձր և, վերջապես, օդում կախված։ Վիթխարի գահը իբրև պահակներ շրջապատել էին պղնձյա կամ փայտյա, բայց համենայն դեպս ոսկեզօծված առյուծներ, որոնք կատաղաբար պոչերը զարկում էին գետնին, բացում երախները, շարժում լեզուն և բարձրաձայն մռնչյուն արձակում։ Ես հենվեցի երկու ներքինիների ուսերին և այդպես բերվեցի ուղղակի նորին կայսերական մեծության առաջ։ Իմ հայտնվելուն պես մռնչացին առյուծները և թռչունները երգեցին յուրաքանչյուրն իր մեղեդին։ Եվ ես ոչ վախ զգացի և ոչ էլ զարմանք, քանզի նախօրոք որոշ իրազեկ մարդկանց կողմից տեղեկացել էի այդ բոլոր բաներին։ Այն բանից հետո, երբ ես, համաձայն սովորության, երրորդ անգամ խոնարհվեցի կայսեր առաջ, ողջունելով նրան, ես բարձրացրի գլուխս և տեսա կայսրին բոլորովին այլ հագուստով համարյա դահլիճի առաստաղի մոտ, այն դեպքում, երբ հենց նոր տեսել էի նրան գահի վրա գետնից մի փոքր բարձրության վրա։ Ես չէի կարողանում հասկանալ, թե դա ինչպես տեղի ունեցավ. երևի այն վեր էր բարձրացվել մեքենայի օգնությամբ։ Նա ոչ մի բառ չարտասանեց, իսկ եթե ուզենար

էլ արտասանել, ապա արարողության այդպիսի ընդհատումը կհամարվեր վերինաստիճանի անվայելուչ բան։ Բերենգարի կյանքի և առողջության մասին ինձ հարցրեց լոգոֆետը։ Պատասխանելով նրան ըստ սովորույթի՝ թողեցի ընդունե- լության դահլիճը և ետ գնացի իմ հյուրանոցը։

Նույն տեղում, էջ 131–132։

2. Ժամանակակիցները Լեոնարդոյի բազմակողմանի օժտվածության մասին

Լեոնարդո դա Վինչին (1452–1519) Վերածնության դարաշրջանի մեծ վարպետ էր, նրա տաղանդը՝ համապարփակ։ Նա արվեստագետ էր և գիտնական, տեսաբան և պրակտիկ, հանճարեղ և հանրամատչելի։ Լեոնարդոն հանդես եկավ իբրև նոր գիտության հիմնադիր, որոշ բնագավառներում կանխելով գիտելիքների մակարդակը մի քանի հարյուրամյակով, կանխագուշակեց շատ հայտնագործություններ, որոնց նկարագրությունը նա տվեց իր գրական աշխատություններում՝ դա օդանավն է և ավտոմոբիլը, թունավոր հեղձուցիչ գազերը, կարևորագույն տեխնիկական և գիտական հայտնագործություններ։ Նա ուսումնասիրեց նյութերի դիմադրության օրենքները, ջրակայունության, շփման օրենքները, դրեց պատերազմների տեսության սկզբունքները և այլն։

Համարյա չկա գործունեության այնպիսի ոլորտ, որի հետ առնչություն չունենար Լեոնարդոյի վարպետությունը։ Նա զբաղվում էր անատոմիայով, կենդանաբանությամբ, բնախոսությամբ, բուսաբանությամբ, մարդաբանությամբ, աշխարհագրությամբ, տեղագրությամբ, տիեզերագրությամբ, զուտ մեխանիկայով, ջրաբաշխությամբ, ջրամեխանիկայով, օվկիանոսագիտությամբ, ձայնագիտությամբ, լուսագիտությամբ, աստղաբաշխությամբ, մաթեմատիկայով և տեխնիկայի բոլոր տեսակներով, օդաչվությամբ։

Նրա արվեստը նվաճում է ամենից առաջ իրապաշտական մոտեցումով տարբեր առարկաների պատկերմանը։ “Դրանում վառ արտահայտություն գտավ վերլուծական, գիտական միտումը, որը տարբերում է Լեոնարդոյի արվեստը առաջին իսկ քայլերից, քանզի նրա համար պատկերել՝ նշանակում է ուսումնասիրել”։ Նա մշտապես պայքարում էր սեփական մեթոդի համար և ընթանում էր իր ուղիով։

ա) Նրա (Լեոնարդոյի) ձիրքը այնքան մեծ էր, որ ցանկացած դժվարին առարկաներում, որոնց դիմում էր նրա հարցասիրությունը, նա դյուրին կերպով և կատարելապես լուծում էր գտնում. նրա մեջ շատ ուժ կար, և այն միավորվում էր

դյուրինությանը. նրա խոհերը և վարքը միշտ արքայական էին և մեծահոգի, իսկ նրա անվան փառքը այնքան հեռու էր հորդել, որը ոչ միայն իր ժամանակի մեջ էր նա պատիվ վայելում, այլև էլ ավելի աճեց հետագա սերունդների մեջ նրա մահից հետո:

բ) Նա ամեն օր նմուշ–օրինակներ և գծագրեր էր անում, որոնք ցույց էին տալիս, թե ինչպես հեշտությամբ կարելի է խորտակել սարերը և նրանց մեջ թունելներ փորել մի հովտից մինչև մյուսը, և թե ինչպես լծակների, ամբարձիչ-ների և պտուտակների օգնությամբ բարձրացնել և տեղաբաշխել մեծ ծանրու-թյուններ, ինչպես նաև՝ թե ինչպես չորացնել նավահանգիստները և ջուրը հե-ռացնել ցածրավայրերից, քանզի նրա ուղեղը երբեք չէր դադարեցնում իր հնա-րանքները...

ԹՈՋՈՐՌ ԺՋ., ԻՌՋվպՏտՌրՈվՌÿ.,
Ծ.խ., 1932, h.II, էջ 89–90, 92:

3. Լեոնարդո դա Վինչիի՝ “Մոնա Լիզայի (Ջոկոնդայի)” դիմանկարի ստեղծման նկարագրությունը

Ջ. Վազարիի հիշողությունները

Դիմանկարի այդ նկարագրությունը իր մանրակրկիտությամբ միակն է, որ հասել է մեզ:

ա) Լեոնարդոն ձեռք զարկեց Ֆրանչեսկո դել Ջոկոնդայի համար կատարելու Մոնա Լիզայի՝ նրա կնոջ դիմանկարը և աշխատելով նրա վրա չորս տարի... թո-ղեց այն անավարտ: Այդ ստեղծագործությունը այժմ գտնվում է ֆրանսիական թագավորի մոտ՝ Ֆոնտենբլոյում: Այդ պատկերը յուրաքանչյուր ոք, ով կուզենար տեսնել, թե արվեստն ինչ աստիճանի կարող է նմանակել բնությանը, հնարավո-ր ություն է ընձեռում ամենահեշտ կերպով հասնելու դրան, քանզի այդ ստեղծա-գործության մեջ վերարտադրված են բոլոր մանրագույն մանրամասները, որպի-սիք միայն կարող է տալ կերպարվեստի նրբությունը: Դրա համար էլ, աչքերը ու-նեն այն փայլը և այն խոնավությունը, որպիսիք սովորաբար տեսանելի են կեն-դանի մարդու մոտ... թերթերունքները... չէին կարող պատկերվել ավելի մեծ բնականությամբ: Քիթը՝ իր հիանալի քթանցքերով՝ վարդագույն ու նուրբ, թվում էր կենդանի: Բերանը՝ թեթևակի կիսաբաց, ծայրերով միացած շրթունքների

կարմրին, իրենց տեսքի մարմնականությամբ, թվում են ոչ թե գույներ, այլ իսկական մարմին։ Վզի փոսիկում, ուշադիր նայելիս կարելի է տեսնել զարկերակի թրթիռը։ Եվ հիրավի կարելի է ասել, որ այդ ստեղծագործությունը այնպես էր նկարված, որ շփոթության ու երկյուղի մեջ կնետի ցանկացած ինքնահավան նկարչի՝ ով էլ որ նա լինի։ Ի միջի այլոց, Լեոնարդոն դիմել էր հետևյալ եղանակին. քանի որ Մոնա Լիզան շատ գեղեցիկ էր, ուստի, դիմանկարը նկարելու ժամանակ նա պահում էր մարդիկ, որոնք քնար էին նվագում կամ երգում, և այդտեղ մշտապես կային ծաղրածուներ, որոնք նրան ուրախ էին պահում և կլանում էին մելամաղձոտությունը, որը սովորաբար հաղորդում է կերպարվեստը կատարվող դիմանկարներին։ Իսկ Լեոնարդոյի մոտ այդ ստեղծագործության մեջ ժպիտը այնքան հաճելի է տրված, որ թվում է, թե նայում ես ավելի շատ աստվածային, քան մարդկային էակի. բուն իսկ դիմանկարը համարվում է անավարտ ստեղծագործություն, քանզի կյանքն ինքը չէր կարող այլ կերպ լինել։

ԾՈՐՑՊՐՈ ՌՐՍՑՐՐՑՉՈ Տո
ՌՐՍՑՐՐՑՉպ։ ԼՉՈՐՈՎվՉպ ՏՑՐՐՕՉՍՈ Ռջ
տՌՐպՎ, ՊվպՉվՌՍՏՉ, Ռպփպո Ռ
ՑՐՈՍՑՈՑՏՉ, Չ 4–ւ Ց., Ծ., 1937, հ. 1, էջ
264–265։

4. Միքելանջելոյի կենսագրությունից

Միքելանջելո Բուոնարոտին (1475–1564) իտալական մեծագույն արվեստագետ է՝ քանդակագործ, նկարիչ, ճարտարապետ։ Նա ինքն իրեն համարում էր բնածին քանդակագործ, օժտված էր բանաստեղծական շնորհքով, գրում էր բանաստեղծություններ։ Միքելանջելոն աշխատել է Ֆլորենցիայում, Բոլոնիայում, Հռոմում, որտեղ մասնակցություն է ունեցել սբ. Պետրոսի տաճարի կառուցմանը և վիթխարի աշխատանք է կատարել՝ նկարազարդելու Սիքստինյան մատուռի առաստաղը։

ա) Տղան հակում էր զգում նկարչության նկատմամբ և այդ զբաղմունքին էր նվիրաբերում իր ամբողջ ազատ ժամանակը, դա անելով գաղտնի, քանզի հայ- ը և ուսուցիչները պախարակում և երբեմն ծեծում էին նրան. դրա համար էլ, թերևս, ծանոթ չլինելով այդ արվեստին, այն համարում էին նվաստացուցիչ և անվայել հին տոհմի (որին պատկանում էր Միքելանջելո ընտանիքը) ներկայա-

ցուցիչների համար։

բ) Միքելանջելոն խիստ չափավոր էր, և պատանության տարիներին, որպես-զի չկտրվի աշխատանքից, բավարարվում էր աննշան քանակությամբ հացով և գինով... Լինելով հարուստ՝ նա չքավորի ապրելակերպ էր վարում, երբեք կամ ծայրաստիճան հազվադեպ էր բարեկամներից որևէ մեկի հետ սեղան նստում և չէր ուզում ոչ ոքից ընծա ընդունել, համարելով, որ դա կպարտավորեցնի իրեն...

Միքելանջելոյի վարպետության մասին

ա) Միքելանջելոյի արվեստը ճանաչվել էր դեռևս նրա կենդանության օրոք, և ոչ թե նրա մահից հետո, ինչպես որ դա լինում է ուրիշների հետ։ Դա բաժին է ընկնում միայն այնպիսի երևելի նշանակության տեր մարդկանց, որպիսին հենց նա էր։ Բոլորը տեսան և ընդունեցին, որ երեք արվեստներ (նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը) նրա կողմից հասցվել են այն աստիճանի կատարելության, որը չի կարելի գտնել ո՛չ հին, ո՛չ էլ առավել ևս նոր վարպետների ստեղծագործության մեջ և որը արեգակի շրջապտույտի անհամար տարիների ընթացքում Աստված միայն նրան էր շնորհել։

բ) Միքելանջելոն օժտված էր խիստ լավ, բազմակողմանի հիշողությամբ։ Բավական էր, որ նա միայն մեկ հայացք նետեր ուրիշների աշխատանքների վրա, որպեսզի պահեր հիշողության մեջ և օգտվեր նրանցից այնպես, որ ոչ ոք դա չնկատեր։ Նա նաև ոչինչ չէր արարում, որը նման լիներ նրա ավելի վաղ ստեղծագործություններին, որովհետև հիշում էր այն ամենը, ինչ արարել էր նախկինում։

գ) Նա բավարարվում էր այն բնագավառով, որում անցել էր բոլոր արվեստագետներին՝ պատկերի ցանկացած դժվարությունների դեպքում մերկ մարմինը պատկերելու կոթողական արվեստի ստեղծման մեջ... Նա ցույց տվեց ուղին դեպի արվեստի գլխավոր խնդիր, որպիսին է մարդկային մարմինը, և ուշադրություն դարձնելով միայն նրա վրա, մի կողմ էր թողնում գույների խաչը, մանրամասնությունների և նրբությունների քմահաճությունները, որոնք ոչ բոլոր արվեստագետներն են անտեսում, թերևս և ոչ անհիմն։ Հաստատապես կառչելով արվեստի բուն հիմքերին, իրազեկ մարդկանց ցույց տվեց՝ ինչպես հասնել կատարելության։

Միքելանջելոյի բանաստեղծական շնորհքի մասին

Միքելանջելոն... մեծ հաճույք էր գտնում մայրենի լեզվով պոեզիայի մեջ, հատկապես սիրում էր նա Դանթեին, որին բարձր էր դասում և որին հետևում էր մտածելակերպով և սյուժեներով, և Պետրարկային, քանզի ինքն էլ հորինում էր մատրիգալներ և լուրջ բովանդակությամբ սոնետներ...

(Մատրիգալները՝ մայրենի լեզվով կատակերգերն են՝ ի տարբերություն կրոնական երգերի, որոնք գրվում էին լատիներեն։ Դրանք լայն զարգացում էին ստացել Վերածնության դարաշրջանի բանաստեղծների և երաժշտահանների ստեղծագործության մեջ։ Իրենց բնույթով քնարական էին, մտերմիկ)։

“Դավիթը”՝ արվեստի հրաշք

Երբ արձանը վերջնականապես ամրացրին տեղում, նա արձակեց նրա վրայից ծածկույթը, և, ճիշտն ասած, նա խլեց բոլոր արձանների փառքը՝ ժամանակակից թե անտիկ, հունական և հռոմեական... այնպես ճիշտ, համաչափ, գեղեցիկ էր արարել Միքելանջելոն. հիասքանչ էր նրա ոտքերի ուրվապատկերը, աստվածային են կողերի մկանայնությունը և բարեկազմությունը, չտեսնված մի բան, որպեսզի ինչ–որ մի բան համեմատվեր նրա դիրքի, ինչպես և ոտքի թաթերի, ձեռքի ափերի, դեմքի հաճելիության ու նրբագեղության հետ...

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
(7–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

1. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:
2. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ:
3. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնական կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004:
4. Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքի գնահատման ուսումնասիրություն, պատրաստվել է «Ի-Վի քոնսալթինգ» ՓԲԸ-ի և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» գրասենյակի պատվերով, Երևան, 2016:
5. Գիլգամեշ, թարգմ.՝ Ն. Մարտիրոսյանի, Երևան, 1963:
6. Հերոդոտոս, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986:
7. Մ.Կերամ, Աստվածներ, դամբարաններ, գիտնականներ, Երևան, 1971:
8. Է.Կլենգել–Բրանդտ, Ճանապարհորդություն դեպի Հին Բաբելոն, Երևան, 1981:
9. Զ.Կոսիդովսկի, Երբ արևը աստված էր, Երևան, 1987:
10. Հերոդոտոս, Պատմություն, Երևան, 1986:
11. Քսենոֆոն, Անաբասիս, Երևան, 1970:
12. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, “Հին հունական աղբյուրներ”, հատոր Ա, Երևան, 1985:
13. Հոմերոս, Իլիական, Երևան, 1955, 1987:
14. Հոմերոս, Ոդիսական, Երևան, 1957, 1988:
15. Եգիպտոսի առասպելները, Երևան, 1972:

16. Ա. Նեյհարդ, Ի. Շիշովա, Հին աշխարհի յոթ հրաշալիքները, Երևան, 1989:
17. Հ. Բաղալյան, Օրացույցի պատմությունը, Երևան, 1970:
18. Ա. Առաքելյան, Հունական գրականության պատմություն, Երևան, 1962:
19. Ա. Առաքելյան, Հռոմեական գրականության պատմություն, Երևան, 1975:
20. "Հին Հռոմ", ընթերցանության գիրք, Երևան, 1958:
21. "Հին Հունաստան", ընթերցանության գիրք, Երևան, 1958:
22. Ժ. Ռոնի Ավագ, Պայքար կրակի համար, Երևան, 1938:
23. Ի. Կորաբլյով, Հաննիբալ, Երևան, 1988:
24. Ս. Ուտչենկո, Հուլիոս Կեսար, Երևան, 1980:
25. Cambridge Ancient History. v 7 (Ancient Greece) Cambridge, Cambridge university press., 1964.
26. Cambridge Ancient History. v 8 (Roman Republic), Cambridge. Cambridge 1965.
27. Cambridge Ancient History. v 9 (Roman Empire), Cambridge. Cambridge 1966.
28. R. Syme, Roman Revolution, Oxford univ. press 1972.
29. N. Davies, Europe. A. History, Oxford, Oxford university press, 1996.
30. E. Weber, World History, v 1–2, Harvard university press, MA Cambridge, 1976–1978.
31. F. Braudel, A History of Civizations, New York, Pengun. books, 1993.

1. Anderson, L.W., & Krathwohl (Eds.). (2001). A Taxonomy for Learning, Teaching, and Assessing: A Revision of Bloom's Taxonomy of Educational Objectives. New York: Longman. Bloom, B., Englehart, M. Furst, E., Hill, W., & Krathwohl, D. (1956). Taxonomy of educational objectives: The classification of educational goals. Handbook I: Cognitive domain. New York, Toronto: Longmans, Green.
2. California common core state standards.
3. Cohen D. K. (University of Michigan), Mehta D.J., (Harvard University), American Educational Research Journal, August 2017, Vol. 54, No. 4, pp. 644–690, DOI: 10.3102/0002831217700078

4. Competency-based Curriculum: An Effective Approach to Digital Curation Education Jeonghyun Kim Department of Library and Information Sciences, College of Information, University of North Texas. Email: Jeonghyun.Kim@unt.edu
5. Connecting IB to the NGSS.
6. Curriculum, Pedagogy and Educational Research: The Work of Lawrence Stenhouse Front Cover John Elliott, Nigel Norris Routledge, Mar 15, 2012
7. Draft State Standard for General Education
8. E. Gibbon, The History of the Decline and Fall of the Roman Empire, vol. 1, London, 1776.
9. Elton H. Warfare in Roman Europe, A. D. 350 - 425. New York, 1996.
10. Finnish National Board of Education, National Core Curriculum for preparatory education for general upper secondary Education 2014.
11. Grégoire de Tours, Histoire des Francs, nouvelle édition de Guizot, augmentée de la géographie par Alfred Jacobs, 2 tomes, Librairie Académique, Paris, 1861.
12. Haldon J. F., Byzantium in the Seventh Century: The Transformation of a Culture. Cambridge, 1997.
13. Haldon J. F., Warfare, State, and Society in the Byzantine World, 565-1204. London, 1999.
14. Aberth J., Contesting the Middle Ages. Debates that are Changing our Narrative of Medieval History. London/ New York, Routledged, 344 pp.
15. La Nouvelle histoire / Sous la dir de J. Le Goff, R. Chartier, J. Revel. Bruxelles: Editions Complexe, 1988, 334.
16. Grant M., From Rome to Byzantium: The Fifth Century AD, Routledge, 2015.
17. Massachusetts States' Curriculum and Standards.
18. OECD, 2018, Making the Curriculum Work Centre for Educational Research and Innovation
19. OECD, 25 Nov 2020.What Students Learn Matters Towards a 21st Century Curriculum.

20. Štih P., The Middle Ages Between the Eastern Alps and the Northern Adriatic: Select Papers on Slovene Historiography and Medieval History, Leiden-Boston: Brill Academic Publishers, 2010, 488 p.
21. Pasi Sahlberg's "Finnish Lessons 2.0: What Can the World Learn from Educational Change in Finland. Teachers College Press; 2nd edition (January 1, 2015)
22. Pomper P., Elphick R.H., Vann R.T., World History: Ideologies, Structures, and Identities, Bodmin: Mpg books Ltd, 1998. - 296 p.
23. Powney, J., Cullen, M-A., Schlapp, U., Johnstone, M. & Munn, P. (2127). Understanding value education in the primary school. York: Reports Express.https://www.jstor.org/stable/27521312?seq=1#metadata_info_tab_contents. http://www.curriculum.edu.au/leader/values_education_what,_how,_why__what_next,36873.html?issueID=12833)
24. The Cambridge Ancient History, 14 Vol. 1970-2000.
25. The New Cambridge Medieval History, Volume 1, c.500–c.700. Edited by Paul Fouracre. 2005. Volume 2, c.700–c.900. Edited by Rosamond McKitterick. 1995. Volume 3, c.900–c.1024. Edited by Timothy Reuter. 1999. Volume 4, c.1024–c.1198, Part 1. Edited by David Luscombe, Jonathan Riley-Smith. 2004. Volume 4, c.1024–c.1198, Part 2. Edited by David Luscombe, Jonathan Riley-Smith. 2004. Volume 5, c.1198–c.1300. Edited by David Abulafia. 1999. Volume 6, c.1300–c.1415. Edited by Michael Jones. 2000. Volume 7, c.1415–c.1500. Edited by Christopher Allmand. 1998.
26. The Oxford World History of Empire: Volume One: the Imperial Experience, Oxford University Press, 2020, 584 p.
27. Thomas, E. (1992). Moral development, cultural context and moral education, In Chong, K.C. ed. Moral Perspectives and Moral Education. Singapore, University of Singapore Press.
28. Treadgold W. T., A History of the Byzantine State and Society. Stanford, 1997.
29. Wittaker C., Frontiers of the Roman Empire: A Social and Economic Study. Baltimore, 1994.
30. World History: Preparing for the Advanced Placement Examination, Perfect Learning Corporation 2018 Edition, 732 p.

31. Всемирная история в 6 томах., гл. ред. Чубарьян А. (2011-2017).
32. Дельбрюк Г., История военного искусства в рамках политической истории Т.1 СПб.1994г.
33. Тарле Е., История Италии в средные века. Москва 2003.
34. Ермолова И.,Римская империя и федераты IV-V вв.М.1999г.
35. Кондратева И., Гунны. Эпоха великого переселения народов, Москва, 1978 г.
36. Жуков К., Американские историки о военных причинах падения Рима, Вестник Новгородского Государственного Университета, 2013 г., стр. 83-86.
37. Багрянородный К., Об управлении империей, *Пер.*, *текст*, *коммент.*, под *ред.* Г. *Литаврина*, А. *Новосельцева*, *М.*, 1989.
38. Культура Византии *(*вторая половина VII - XII *века)*. Издательство: *М.*, Наука, *1989*, 460 с.
39. Лозинский С., История папства, М., 1986.
40. Ковалев С., История Рима, Санкт Петербург, 2002.
41. Соловьев Э., Непобежденный еретик. Мартин Лютер и его время, М., 1984.
42. Томпсон Э., Римляне и варвары. Подение Западной Империи. Издательский дом «ЮВЕНТА», 2003.
43. Томпсон Э., Гунны. Грозные воины степей «ЗАО Центрполиграф», 2008.

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(VII դասարան, շաբաթական 2 դասաժամ, տարեկան 68 դասաժամ)

Դաս 1. Դասագրքի ներածություն

ԲԱԺԻՆ I. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (30 ժամ)

Դաս 2. Հին աշխարհի պատմության ներածություն

Թեմա 1. Հին Արևելքի քաղաքակրթությունները (13 ժամ)

Դաս 3-6. Հին Եգիպտոսը
Դաս 7-9. Հին Միջագետքը
Դաս 10. Խեթական պետությունը
Դաս 11. Հին Հնդկաստանը
Դաս 12. Հին Չինաստանը
Դաս 13-14. Աքեմենյան Իրանը
Դաս 15. Թեմա 1-ի ամփոփում (1 ժամ)

Թեմա 2. Անտիկ քաղաքակրթությունները. Հին Հունաստան և Հին Հռոմ (14 ժամ)

Դաս 16-22. Հին Հունաստանը
Դաս 23-29. Հին Հռոմը
Դաս 30. Թեմա 2-ի ամփոփում (1 ժամ)
Դաս 31. Առաջին բաժնի ամփոփում (1 ժամ)

ԲԱԺԻՆ II. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (35 դասաժամ)

Դաս 32. Միջին դարերի պատմության ներածություն

Թեմա 3. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում (21 դասաժամ)

Դաս 33-35. Նոր պետությունների առաջացումը Եվրոպայում
Դաս 36-38. Բյուզանդիան
Դաս 39-41. Ռուսաստանը միջնադարում
Դաս 42-43. Խաչակրաց արշավանքները
Դաս 44-45. Անգլիան միջնադարում
Դաս 46-47. Ֆրանսիան միջնադարում
Դաս 48-49. Գերմանիան միջնադարում
Դաս 50-51. «Մինչկոլումբոսյան քաղաքակրթությունները» Ամերիկայում
Դաս 52. Թեմա 3-ի ամփոփում (1 ժամ)

Թեմա 4. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևելքում (13 ժամ)

Դաս 53-54. Արաբական խալիֆայությունը
Դաս 55. Մոնղոլական կայսրությունը
Դաս 56-57. Չինաստանը միջնադարում
Դաս 58. Հնդկաստանը միջնադարում
Դաս 59-60. Ճապոնիան միջնադարում
Դաս 61-62. Օսմանյան կայսրությունը միջնադարում
Դաս 63-64. Իրանը միջնադարում
Դաս 65. Թեմա 4-ի ամփոփում (1 ժամ)

Դաս 66. Երկրորդ բաժնի ամփոփում (1 ժամ)
Դաս 67-68. Հին աշխարհի և միջնադարի պատմության ամփոփում (2 ժամ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԱՌԱՋԻՆ
«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

1. Առարկայի ուսուցման նպատակները.....3
2. Առարկայի ընդհանուր բնութագիրը.....5
3. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները 7-րդ դասարանի համար 5
4. Առարկայի մոտեցումները.....6
5. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցության նկարագրությունը 7
6. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներրի գնահատումը 8

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

1. Պատմության դասավանդման մեթոդիկայի մասին. օգնություն ուսուցչին..... 10
2. Մեթոդներ, հնարներ, վարժություններ 27
3. Ուսումնական գործունեության տեսակները 42
4. Ուսուցչի նախապատրաստվելը դասին 43

ՄԱՍԵՐՐՈՐԴ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Մեթոդական խորհուրդներ առանձին դասերի օրինակով..... 50
2. Լրացուցիչ ուսումնական նյութեր Հին աշխարհի պատմությունից (աղբյուրներ և փաստաթղթեր)..... 72
3. Գրականության ցանկ (VI դասարան)..... 58

ՄԱՍՉՈՐՐՈՐԴ
ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Ուսումնասիրման նպատակը և խնդիրները 75
2. Մեթոդական խորհուրդներ ըստ բաժինների..... 76
3. Լրացուցիչ գործնական նյութեր միջին դարերի պատմությունից (աղբյուրներ և փաստաթղթեր)..... 91

ՄԱՍՀԻՆԳԵՐՈՐԴ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրականության ցանկ 92

ՄԱՍՎԵՑԵՐՈՐԴ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Օրինակելի թեմատիկ պլանավորում 96

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VII ԴԱՍԱՐԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հրատարաչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6,75 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak